



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1875 ՍՄԻՆ

ՆԻՍՏ Է.

18 ՅՈՒՆԻՍ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳՍԿԱՅԵԱՆ

1875

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան Արալանեան	փաշա	Ա. ԱՅՆԱԳԵՏ
Ռուսինեան	էֆէնտի	Ք.
Քրիստոստուր Ղաղարոսեան	»	Ք.
Համբարձում Ս. Ալաճաճեան	»	Ա. ԱՅՆԱԳԵՏ
Գարեգին Մեղիքեան	»	Ք.
Պօղոս Պառնասեան	»	Ք.

ՁԵՌՆ ՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ		ԱՅՆԱԳԵՏ
Տ. Յովհաննէս Ք. Մկրտեան	էֆէնտի	
Նիկողոս Ալաճաճեան		

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան Սուսուֆեան	էֆէնտի	ԱՅՆԱԳԵՏ
Գէորգ Ստիմարաճեան	»	
Ռուբէն Կիւմիւշկէրասեան	»	

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Քրիստոստուր Ղաղարոսեան	էֆէնտի	ԱՅՆԱԳԵՏ
Յովհաննէս Ազնաւուրեան	»	
Բարսեղ Հալաճեան	»	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Կոսեան	էֆէնտի	
Ստեփան Պէլիկեան	»	
Սիմոն Միքայէլեան	»	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Առաքել Ալթուն Տիւրրի	էֆէնտի	
Տիգրան Կիւմիւշկէրասեան	»	
Ոգոսէն Խօճասարեան	»	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Մատթէոս Վ. Իզմիրլեան		ԱՅՆԱԳԵՏ
Տ. Գրիգոր Ք. Աճէմեան		
Աննքերիմ Մանուկեան	էֆէնտի	

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Շահպաղեան	էֆէնտի	
Յովսէփ Մազրմեան	»	
Ստեփան Փափաղեանց	»	

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խաչատուր Միսաքեան	էֆէնտի	ԱՅՆԱԳԵՏ
Կարապետ Իւթիւճեան	»	
Յարութիւն Մէրեճի-Գուլի	»	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1875 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Է

18 ՅՈՒԼԻՍ 1875

ՆԱԽԱԳԱՀ. — ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ
ԱՏԵՆԱՊԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԻՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄՆԻՔ	22. Աղարդձաճեան Կարապետ	Խալիկտար Ս. Կարապետ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ	25. Ապրօ Սաջակ	Բ. 2
1. Գրիգոր Արքեպիսկ.	24. Գափամաճեան Մինաս	49. Միհրան Պաճճէրափուլեան
2. Խորէն « Նար Պէյ	25. Խօրասանճեան Յովհաննէս	Բ. 2
3. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց	26. Մազպուլեան Համբարձում	50. Յովհաննէս ձիւճեան
4. Գարեգին « Թաթարեան	27. Մանկասարեան Խաչիկ	Բ. 2
5. Խորէն « Կիրոյեանց	28. Մանուկեան Սենքերիմ	51. Նիկողոս Ալաճաճեան
6. Կարապետ « Սերոբեան	29. Պառնասեան Պօղոս	52. Տիգրան Փափաղեան
7. Հմայեակ « Դիմաքսեան	30. Պէրպէրեան Գրիգոր	(Գ. Վիճակ)
8. Մատթէոս « Իզմիրլեանց	31. Պօղոսեան Յովհաննէս	Յնրա
9. Յովհաննէս « Փափաղեան	32. Ռուսինեան	55. Արիկ Ունճեան
10. Ներսէս « Ալաճեան	33. Սուրենեան Յովհաննէս	Բ.
11. Պօղոս « Խօղասմեան	34. Ստիմարաճեան Գէորգ	55. Մարտիրոս Յ. Տիլէեան
12. Եղեկ « Ապաշաւի	35. Տարթոր Փէշարմաճեան	Բ.
13. Արիստակէս-Ք. Մամբրեան	36. Տարթոր Ն. Մէզպուրեան	56. Մէքայէլ Մամիկոնեան
14. Գէորգ « Արծրունի	37. Բէրէսթէճեան Պետրոս	57. Նշան Քաղաղեան
15. Գրիգոր « Աճէմեան		Բ. 2
16. Խորէն « Փէշիկեան	(Բ. Վիճակ)	59. Տեղեմար Մ. Էրսէրճեան
17. Յարութիւն « Սերոբեան	Պէշիքթաշ	Բ. Պ
18. Յովհաննէս « Մկրտեան	58. Բարսեղ Հալաճեան	Բ. Պ
19. Սուրբաս « Ստեփաննոսեան	59. Կարապետ Ս. Իւթիւճեան	60.
20. Սթյանկ « Տ. Սարգսեան	40. Յարութիւն Մարգարեան	61.
ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ	ԵՔՅԻՊՏԻԱՆ	Քաղաղի փաշա
(Ա. Վիճակ)	41. Խաչատուր Ղաղարոսեան	62.
Գրանգափոս, Կեսիկ փաշա ևն	42. Կարապետ Գ. Փափաղեան	Միջնադիակ
Գրանգափոսի զննար	43. Մարտիրոս-Յրէնկեան	65. Կարապետ Պ. Պերեանց
21. Աղարեգեան Սարգիս	44.	Բ. Պ
Բ. Բացակայութիւն առաջին	Խալիկտար Ս. Խաչ	64. Յակոբ Կոստանդեան
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ	45. Յովհաննէս Շահեան	Բ. Պ
Բ. Պ Բացակայութիւն բանաւոր	46. Յովսէփ Ս. Մազրմեան	65. Յակոբ Պ. Նորատուկեան
պատճառաւ	47. Սերաբէ Պառնասեան	Բ. 2
Հ. Զրաժարեալ	48. Ստեփան Ալաճեան	66. Յովհաննէս Աղայեկեան
		67. Տիգրան Եւստուֆեան
		Պէշիքթաշ ևն Ղալաթիս
		68. Յարութիւն Մէրեճի-Գուլի
		Բ. 2
		(Գ. Վիճակ)
		Ղոզղոսնճոս ևն Խնասիկ
		69. Յովհաննէս Կոսեան
		70. Ստեփան Պէլիկեան

Քաղաք/Թեմ	ԳԱՆԱԲԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆԻՔ
71. Կարապետ Շահապետյան	Բ. 2
72. Մկրտիչ Մուրադյան	Բ. 4
Նարչազյան	
73. Յակոբ Եվանյան	Բ. 402.
Երևանյան Մամիսյան	
74. Օրսէն Խոստարեան	Բ. 2 405. Ռուբէն Կիւմրէզկերտանեան Բ. 2
Բոսիգայան	
75.	404. Տեղբան Կիւմրէզկերտանեան Բ.
Էջոպ Ս. Եղիսև և Ս. Ասատու- ծամիև	Այն 405. Պետրոս Միսաքեան
76. Գարեգին Յ. Մելիքեան	Հարահիսար 406.
Քոնրոնիչև	
77. Ասափա Իկիտպաշեան	Բ. 407. Կարապետ Խաչիկեան Բ.
Հիսար և Պոյաճի գիտ	
78. Յովհաննէս Նուբեան	408. Բաղէշ
Նոր գիտ և Սթեփան	
79. Ղազար Հովեան	Պրոնսու 409. Բրիտանուր Ղազարուեան
Պարսա	
80. Ասատուր Գուշատպեան	Բ. 410. Մելքոն Հալաճեան
81. Մկրտիչ Գ. Լսասեան	Բ. 411. Ամասիա
82. Յովհաննէս Կրճիկեան	Բ. 414. Համբարձում Ալաճաճեան
Քարապետիկ	
85. Յարութիւն Զենճիրճեան	Բ. 2 412. Յովհաննէս Ալաճաճեան
84. Յարութիւն Գ. Տատեան	Բ. 413. Երևան
(Ե. Վիճակ)	
Սամսյան	
85. Ալեկոյան Պէշիքեան	414. Հանըն
86. Ալեկոյան Քոչիքեան	
87. Եղիազար Մելիքեան	Բ. 415. Երզնկա և Բարձր
88. Մինաս Ճաֆաճեան	
89. Յակոբ Քաղապետ	416. Թեքիրտաղ
90. Յակոբ Ամասեան	
91. Նազարէթ Շահապետյան	Բ. 417. Տեղբան Գ. Սինանեան
92.	
93.	
94.	Կեսարիա 418. Մատթէոս Մ. Ալաճաճեան Բ. 4
Խոստարեան	
95. Առաքել Ալթուն Տիւրքի Բ.	Խարճերդ 419. Յովհան Եղանեան Բ.
96. Խոստարեան Պ. Միսաքեան	
97. Ռէթէոս Պէշիքեան	
98. Սարգիս Արապեան	Պարքուկ 420. Յովհաննէս Յովհաննէս Բ. 2
99. Սարգիս Արապեան	
100. Սինան Մելիքեան	

Մոռ	
121. Ստեփան Պ. Պ. Փափազեանց	
Տիկրիկ	
122. Պողոս Մովսիկեան	
Զեյթուն և Մարաշ	
123.	
Տրապիզոն	
124. Մկրտիչ Կիւմրէան	Բ.
Պարսա	
125.	
Տիգրանակերտ	
126. Թադէոս Թէրեան	Բ.
Վան	
127. Սինան Մարտուեան	Բ. 2
Աղձամար	
128.	
Հալկա և Այնթապ	
129.	
Մերաստիս	
130.	
Ռուսնոյ	
131.	
Կարս	
132. Աբրահամ Յ. Ալաճաճեան Բ.	
Հովհաննիս	
133. Համբարձում Սարգէլեան	
Կաղարիս	
134.	
Ատանա	
135. Սինան Պ. Նորատուեան Բ.	
Մղերդ	
136. Մատթէոս Ալեքսանեան Բ.	
Եօզրատ	
137.	
Մարաշիս	
138.	
Իզմիր	
139.	
Եգիպտոս	
140.	

ՕՐԱԿԱՐԳ

Վերաբնակութիւն Մանսանայրոնթեան. — Երկրորդ ընթացումն առաջարկեալ փոփոխելի տրամադրու-
թեանց. — Վիսարանթիւն Ա. յոդուածոյ, որ և վարչական կեդրոնական մարմնոյ կազմակերպութիւն

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատեանը բացուեցաւ ժամը 7 ին ի ներկա-
յութեան 45 երեսօխանաց, որոց թիւն հետ-
զհետէ աւելնալով 55 ի յանգեցաւ:

x.

Ընդհանուր ընթացքը հետեւեալն էր. —

Ատենապետ փաշան հրաւիրեց երեսօ-
խանները նախընթաց նստի ատենագրութեան
վրայ զիտողութիւնն եթէ ունին ընել:

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ. ԷՖ. — Նախորդ նստին
մէջ երբ Երեսօխան Էֆէնտի Սահմանագրու-
թեան վերաբնութեան խնդրոյն վրայ կատե-
նաբանէր, եւ երբ առաջին անգամ ընդմիջե-
ցին իւր բանախօսութիւնը, Երեսօխան Է-
ֆէնտի դարձաւ ըսաւ ժողովին, թէ ինք պատ-
րաստ է լուել, եթէ ժողովը կը կարծէ թէ խո-
տորած է վերաբնութեան ընդհանուր սկզբանց
վրայ խօսելու սահմանէն: Այս խօսքը ճշդիւ
արձանագրուած է, իրան. բայց միեւնոյն խօսքն
ի վերջոյ այլայլուած եւ Ատենապետ փաշայի
բերնով կրճիկեան Էֆէնտի ի պատասխան
գրուած է այսպէս.

« Երեսօխան Էֆէնտին ինքն ըսաւ. թէ
կը լուեմ, քանի որ խնդրոյն շրջանէն դուրս չը
պիտի խօսուի »:

Այս տեղ իմաստի մեծ տարբերութիւն կայ,
եւ այնքան շօշափելի՛ որ բացատրութեան իսկ
կարօտ չեմ գտներ:

ԱՏԵՆԱԿԱՆ ՓԱՇԱ. — Եւ դուք ինչպէս կը

կարծէք, թէ Երեսօխան Էֆէնտին ըսած լինի:
ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ. ԷՖ. — Ինչպէս գրուած
է ի սկզբան, այսինքն Երեսօխան Էֆէնտին
պարզապէս յայտարարեց թէ ինք պիտի լուէ,
եթէ ժողովը կը կարծէ թէ խոտորած է ընդ-
հանուր սկզբանց վիճարանութեան սահմանէն.
Եւ չըսաւ ընաւ թէ՛ « կը լուեմ, քանի որ խնդ-
րոյն շրջանէն դուրս չպիտի խօսուի »:

ԱՏԵՆԱԿԱՆ ՓԱՇԱ. — Շատ աղէկ, եւ սա-
կայն այս ձեր կարծիքն է միայն: Ատենաբա-
նին կը պատկանի ուղղել երբ որ եւ է սխալ
նշմարէ իւր խօսքին խմբագրութեան մէջ: Գէթ
Երեսօխան Էֆէնտին ալ ներկայ չէ այժմ որ
իրեն հարցնենք եւ ձեր զիտողութիւնն ստու-
գենք: Երեսօխան Էֆէնտի դժբաղդու-
թիւնն է որ միշտ ուրիշներն փաստաբան կը
կանգնին իրեն:

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ. ԷՖ. — Ընդհանուր կեր-
պով, Ատենապետ փաշան, հրաւիր կարգացիք
ատենագրութեան վրայ զիտողութիւնն ընելու,
եւ այսպէս իրաւունք ունեցայ զիտել տալ որ
Երեսօխան Էֆէնտի խօսքը իւր բերնով ու-
ղիղ՝ արձանագրուեր է, եւ այլ իմաստ՝ Ատե-
նապետ փաշայի բերնով:

ԱՏԵՆԱԿԱՆ ՓԱՇԱ. — Երկուքն ալ թերեւ
տարբեր բացատրութեամբ գրուած լինին.
բայց իմաստի կողմէ նոյնն է իրենց նշանակու-
թիւնը: Կը ցաւիմ որ դուք ինչ որ ուրիշ ի-
րաւունքն է, զայն կատարել կուզէք, եւ զի-
տողութիւն կընէք: Կը կրկնեմ, որ Երե-
սօխան Էֆէնտի ընծայուած այդ խօսքին
մէջ եթէ սխալ մ'անգամ սպրդած լինի, ատե-
նաբանին անկ է ուղղել զայն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Ատենադրութեան 327- էջ առաջին սիւնակին մէջ իմ մէկ խօսքս պէտք էր երեւիլ, եւ որ բոլորովին զանց եղած կը տեսնեմ: Իմ ֆէյլիստի հրատարականի խնդիրն յուզուած ատեն՝ ըսի որ երեսփոխան մը երբ կը հրատարի սոսկ անձնական պատճառով եւ կը յայտնէ թէ չկրնար դործակցիլ ժողովին, այս տեսակ հրատարական մը քուէի դնել հարկ է:

ԱՏԵՆԱՊԻՐ ԷՖ.— Քրիստոստուր էֆէնափին իւր մէկ խօսքը կը յիշեցնէ, որ չէ արձանագրուեր: Արդարեւ նոյն պահուն ուրիշ խօսողներ ալ եղան, բայց անկանոն կերպով, այսինքն առանց ըստ օրինի խօսք առնելու դիւանէն: Եւ ահա այս է պատճառ որ այդ կարգի խօսքեր՝ դուրս մնացած են ատենագրութենէն:

Այս առթիւ կը խնդրեմ ատենաբան էֆէնափինը որ եթէ կուզեն տեսնել իրենց խօսքը ատենագրութեան մէջ, հաճին իրենք ալ կարգաւ եւ խօսք առնելով խօսիլ, եւ գէթ այս կերպով դիւրութիւն մ'ընծայել դիւանին՝ արձանագրութեան մասին:

Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնափ պատասխանել կուզէ. սակայն Ատենագրութեան փաշա յայտարարելով թէ ատենական կանոնը չներէր երեսփոխանի մը ատենագրութեան դիտողութեան ատեն՝ մի անգամէն աւելի խօսիլ, թոյլ չտար, եւ արդէն դիտողութիւնը վերջացած լինելուն ատենագրութիւնը քուէի կը դնէ եւ ժողովը ընդդէմ 1 + 1-է ընդհանուր հասանութեամբ կը ընդդէմ շարժէ:

2.

Բացակայութիւն

Ատենագրութեան փաշան յայտարարեց ժողովին որ երեսփոխաններէն

S. Խորէն	արքեպիսկոպոս	հարապէյ
Սենեքերիմ	էֆէնափ	Մանուկեան
Յովսէփ	»	Մազլըմեան

անձնական տկարութեան ենթակայ՝ ստիպուեր են այսօրուան նիստէն բացակայ մնալ, եւ զըրով ծանուցեր են իրենց բացակայութեան օրինական պատճառը:

Ասոնցմէ զատ յիշեց նաեւ

Պէրեան կարապետ էֆէնափին

որ թէ եւ լուռ իւր բացակայութեան վրայ՝ սակայն դիւանատան պաշտօնեայք ստուգեր են անոր հիւանդութիւնը եւ հրաւիրագիրն անգամ չեն կրցեր ձեռքն հասցնել, իւր բնական թիւնն այլուր փոխադրած լինելուն պատճառաւ: Հետեւապէս բանաւոր պատճառաւ բացակայ գտնուող այս չորս երեսփոխանաց անուններն արձանագրուեցան:



Օ Ր Ա. Կ Ա Ր Գ

Վերահանութեան Սահմանադրութեան.— Երկրորդ ընթացքով ընդունուած է Սահմանադրութեան 11-րդ հոդուածը: Վերահանութեան Ա. յօդուածը վերջին օրը որ դրուուել է վերջին օրը յարմար ժամանակ, ինչպէս նաեւ վերահանութեան 11-րդ հոդուածը կը ընդունուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Կը յիշեք անշուշտ որ Սահմանադրութեան վերաբերման վերաբերեալ ծրագիր, տեղեկագիր, եւ վերջապէս ամեն ինչ որ այս մասին եկած են ժողովին, արդէն կարդացուած են, եւ անոնց սկզբանց եւ ոգւոյն վրայ ընդհանուր վիճաբանութիւնը կատարուած եւ փակուած է նախընթաց նիստին մէջ: Եւ որովհետեւ կանոնը կը պահանջէ որ օրինական ծրագիրը երկրորդ ընթացքով յօդուած առ յօդուած վիճաբանութեան եւ քուէի դրուին, ուստի ժողովը պիտի անցնի հիմա փոփոխելի տրամադրութեանց երկրորդ ընթացքին: Թէ որոնք են այդ տրամադրութիւնը եւ ինչ են առաջարկուած փոփոխութիւնք. արդէն նախընթաց նստին մէջ ամփոփեցի, եւ զըլխաւորապէս չորս կէտերու վերածելով՝ անոնց մէկ բովանդակութիւնը ներկայացուցի, զոր ժողովը ընդունեց հաւանութեան ցոյցերով:

Առաջին կէտը՝ կեդրոնական վարչական մարմնոյ կազմակերպութեան կը վերաբերի: Մեր Սահմանադրութիւնը Պատրիարքի նախագահութեան ներքեւ երկու ժողով, չորս խորհուրդ եւ երեք հոգաբարձութիւն սահմանած եւ այսպէս կերպաւորած է կեդրոնական վարչութիւնը: Իսկ վերաբանութիւնը ասոնց տեղ մեզ կառավարիչ երեք խորհուրդ, մէկ դատարան եւ երկու հոգաբարձութիւն կազմել, եւ այս կերպով կեդրոնական վարչութիւնը մարմնաւորել: Այս նոր դրութիւնը՝ զոր կատար-

կեն մեզ, սահմանադրական մեր արդի դրութեան կը տարբերի զանազան կէտերով: Վարչութեան ճիւղերու անուանց յորջորջման եւ այլ ուրիշ պարագայից փոփոխութիւններ կան. ուստի ինչպէս կը տեսնէք, խնդիրը մի չէ, այլ բազմաձիւր եւ ստորաբաժանմանց կարօտ: Եւ ինչպէս կ'արեւի է արդեօք ուղղութիւն մը, ընթացք մը տալ խնդրոյն, որպէս զի իւր զանազան ճիւղերն պարզուին եւ բացուած վիճաբանութիւնը չը կնճռոտեն: Կարծեմ որ նախ այս առաջին յօդուածին վրայ ընդհանուր վիճաբանութիւն մը ընել պէտք է, եւ այսպէս խնդիրն միանգամ յստակելէ ետեւ անցնիլ մանրամասնութեանց. ինչպէս անգամոց թուոյն, պաշտօնի տեւողութեան եւ ընտրական պայմանաց խնդիրներու վիճաբանութեան մտնել՝ անօգուտ չպիտի լինի եւ պիտի կրնայ զմեզ դէպ ի խնդրոյն լուծուին առաջնորդել: Երբ ժողովը կը հաճի այս եղանակաւ ուղղել վիճաբանութիւնը, կսկսինք, թէ ոչ պատրաստ ենք լսել իրեն:

ՌՈՒՍԻՆՆԱՆ ԷՖ.— Ձեր պարտքն է այդ ուղղութիւնը տալ խնդրոյն, եւ անոր լուծման եղանակը դիւրել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Իմ կամքս այս մասին ձերինն կենթարկեմ ահաւասիկ, եւ կուզեմ հասկնալ թէ ժողովը իմ առաջարկութիւնս վիճաբանութեան ընթացքը ուղղելու համար բաւական կը համարի թէ ոչ: Այս կէտին վրայ ժողովին կարծիքն կը խնդրեմ, եւ ո՞վ որ խօսք օւնի, պատրաստ եմ ունկնդրութեան:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԻԱԳԱՀ.— Կարծեմ, առաջարկութիւնը աղէկ չհասկցուեցաւ. կարելի է արդեօք զայն կրկնել:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Կրկնեմ, եւ դիւրին է հասկնալ խնդիրը:

Սահմանադրութիւնը կեդրոնական վարչութեան կազմութեան եղանակը ցուցուցած է մեզ, եւ զայն երկար տարիներէ հետէ կը փորձենք:

Այս անգամ Սահմանադրութեան վերաբերման ատեն մեծ փոփոխութիւն մը կատարուելի մեզ վարչական մարմնոյն կազմութեանց յին եւ ահա ասոր վրայ բացուած է վիճակի է թիւնը: Ի բաց թողով առաջարկութեան մանրամասնութիւններն, արժան է ըստ իս քննել նախ թէ հարկաւոր է կեդրոնական վարչութիւնը կերպարանափոխել, եւ եթէ

փոփոխութեան կարօտ է, առաջարկուած ձեւը ընդունելի է, թէ՛ ոչ. եւ թէ որն է լաւագոյն դրութիւնը:

Նախ այս կէտին վրայ կառավարիչ վիճաբանիլ, եւ վերջը մանրամասնութեանց մտնել. ո՞վ խօսք կուզէ այս մասին:

ՌՈՒՍԻՆՆԱՆ ԷՖ.— Խնդիրը ճշուոր է ինչպէս յիշեցիք. ուստի Դիւանին պարտքն է բաժնել զայն եւ այնպէս վիճաբանութեան ենթարկել: Ի մէջ այլոց կայ նաեւ վարչութեան ճիւղերուն յորջորջման խնդիրը. այսինքն թէ ինչ անուանելու է զանոնք, ժողով թէ խորհուրդ. ըստ իս նախ այս յորջորջման խնդիրը պէտք է պարզել, որոշել եւ յետոյ անցնիլ բուն յօդուածին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ինչպէս կը տեսնէք, իրաւունք ունէի հարցնելու թէ՛ ինչ ուղղութիւն եւ ընթացք տալ պէտք է խնդրոյն, ինչ միջոց ուրեմն լաւագոյն է ընտրել. յօդուածը ճիւղերու բաժնել եւ ամբողջին վրայ միանգամ վիճաբանելէ ետեւ մասնաւորութեանց մտնել, թէ ոչ անմիջապէս սկսիլ մասնաւորութեանց: Այս կէտին վրայ ո՞վ դիտողութիւն ունի:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ.— Մասնաւորութեանց մտնել լաւագոյն է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Դժբ ալ այդ կարծիքն ունիք. ուրեմն, շատ աղէկ, բայց արժան է դիտել թէ վերաբանութիւնը ինչ փոփոխութիւններ կատարելէ ներմուծել մեր վարչական դրութեան մէջ:

Նախ յորջորջման խնդիր մը կայ, այսինքն ինչ որ Սահմանադրութիւնը ժողով անուաներ է վարչական կազմակերպութեան մէջ, Նախաձեռնութեան դիւանը զայն Խորհուրդ կառավարիչ կոչել, Երկրորդ՝ իրաւասութեան խնդիր մը կայ, այսինքն ներքին գործոց եւ տեսչութեան համար ուրիշ նոր ժողով մ'ալ սահմանուեր է. եւ այսպէս Ուսումնական, Տնտեսական եւ Վաճառելից Խորհուրդներն եւ Կտակաց հոգաբարձութիւնն ջնջուեր են: Վարչութեան անգամոց թիւերը զեղջուեր, վերնտրելիութեան պայմանը փոխուեր, եւ վերջապէս տեղեկագիր ու ծրագիր զանազան բարեփոխութիւններ առաջարկած են մեզ. եւ խնդիրն այսպէս շատ մը ճիւղեր ընծիւղեր է: Այլ սակայն մեր Սահմանադրութեան մէջ Պատրիարքի նախագահութեան ներքեւ երկու ժողով,

չորս խորհուրդ եւ ստորակարգեալ երեք հոգաբարձութիւն կան . եւ այս զրուծիւնն է զոր կառավարկեն մեզ փոխել , Գիւրին է մեզ անուններու մասին համաձայնիլ իրարու . սակայն այս մեծ փոփոխութիւնը կարելի եւ օգտակար է ընդունել , թէ՛ ոչ : Ահաւասիկ այս է ըստ իս , առաջին նիւթ վիճարանութեան , որու վրայ խօսք կուտամ եթէ ուղող կայ . բայց մոռցայ կանխաւ հարցնելու թէ ով է արդեօք Վերաքննիչ յանձնաժողովոյ տեղեկարբը , եւ ով պիտի պաշտպանէ անոր տեղեկագիրը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Տեղեկարբը Մատթէոս վարդապետն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Եւ Նախաձեռնութեան զիւանի կողմէ Ռուսիսեան էֆէնտին է անշուշտ տեղեկարբը :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Այո՛ , եւ ես պիտի խօսիմ ի հարկին . բայց ի խնդիր առաջնորդեցէք զմեզ : Եւ ես կառավարկեմ որ նախ յորջորջման խնդրոյն վրայ խօսուի :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Կ'երկրորդեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ուրեմն հիմա այս է խնդիրը . Սահմանադրութիւնը ազգային գործոց վարչութիւնը երկու ժողովի յանձնած է . տեղեկագիրք կառավարկեն որ ժողով անունը վերցուի եւ Վարչութեան մարմինը խորհուրդ կոչուին , բուն իսկ Ֆրանսերէն +մէյլ բառին թարգմանութեամբ :

ԻԽԹԻԻՃԵԱՆ ԷՖ.— Խորհուրդ բառն առաջարկողներն իրաւունք ունին , վասն զի մեր Կրօնական եւ Քաղաքական ժողովոց պաշտօնին ընտրութեանը այդ անունը կրնայ աւելի պատշաճիլ :

Եւ ստուգիւ ժողովը ընդհանուր ազգէն ընտրեալ եւ զանի ներկայացնող մարմինն է , եւ այսպիսի ժողովէ մը ընտրուած՝ ստորակարգեալ մարմին մը չկրնար եւ ինք միեւնոյն անունը կրել , եւ ժողով կոչուիլ . այսպէս ուրեմն մեր Կրօնական եւ Քաղաքական ժողովներն Ազգային ժողովէն որոշելու համար պատշաճ է զանոնք խորհուրդ անուանել : Բայց թէ ինչ կերպարան եւ ինչ բաժանում պիտի ընդունի մեր վարչական մարմինը , տակաւին յայտնի չէ որոշակի . վասն զի առաջարկութիւն կայ խորհուրդներն ի մի ձուլելու եւ մէկ մարմին մը սահմանելու . հետեւաբար Վարչութեան մարմնոյն անուններն պատշաճութեամբ սահ-

մանելու համար՝ հարկ է նախ անոնց կազմակերպութիւնը որոշել . եւ ի վերջէ զիւրին է իւրաքանչիւրին իւր պաշտօնին համաձայն անուն մը դնել : Ուստի կառավարկեմ որ նախ վարչական մարմնոյն կազմակերպութեան խնդիրն վիճարանութեան նիւթ լինի , եւ ժողովի ի վերջէ մանրամասնութեանց եւ անուանակոչութեան մտնէ :

Այս առաջարկութիւնը Իզմիրլեան Տ. Մատթէոս վարդապետի , եւ Ղազարոսեան , Փափազեան , Գափամաճեան եւ Մանկասարեան էֆէնտիներու եւ այլոց կողմէ կը կրկնուի . հետեւապէս Ասենապետ փաշան քուէի կը գնէ զայն . եւ ժողովը ընդհանուր հաւանութեամբ կորոշէ անուանակոչութեան խնդիրն յետաձգել . եւ նախ վարչական մարմնոյն կազմակերպութեան խնդրոյն վրայ բանալ վիճարանութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Այսպէս ուրեմն ժողովին քուէն կորոշէ խնդրոյն ընթացքին ուղղութիւնը , եւ վարչական մարմնոյն կազմակերպութիւնը առաջին նիւթ կը դառնայ վիճարանութեան : Թէ ինչպէս վարչական մարմինը կերպաւորուած է սահմանադրապէս , հասկնելու համար եթէ ժողովը ուղէ բան մը կրնամք ընել . այսինքն կարգալ Սահմանադրութեան նոյն յօդուածները , սակայն ըստ իս ոչ միայն ժամանակի կորուստ է այս , այլ եւ զլիսովին աւելորդ . վասն զի արդէն գիտենք Սահմանադրութեան նոյն տրամադրութիւններն , եւ այնքան քաջ գիտենք անշուշտ , որ վերաքննելու իսկ ելեր եմք :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Կուզեմ նախ իմանալ թէ Վերաքննիչ յանձնաժողովն ինչ փաստերով կը հերքէ մեր վարչական այժմու դրութիւնը : Ընթերցայ իւր տեղեկագիրը , եւ պատճառաբանութիւն մը չգտի հոն : Յանձնաժողովը՝ փառք Աստուծոյ՝ երեք տեղեկարբեր եւ իբր այն մեծ զիւրութիւն ունի պաշտպանելու իւր գործը . կխնդրեմ ուրեմն որ իւր առաջարկած փոփոխութեան պատճառները մեկնէ մեզ :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ.— Կը ձայնակցիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Փոքր պար , ստույգ կայ , զոր արժան է գիտնալ Ռուսի , մէկէֆէնտինի ձայնակցելէ առաջ , ինքն է աւելորդեր նախաձեռնութեան զիւանին , որ Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագիրը քննելու եւ ար-

դիւնքը տեղեկագրեր է մեզ , եւ զարմանք են որ Գիւանը չգիտէր եղբր այն պատճառներն , որոց վրայ յանձնաժողովն հիմներ է իւր առաջարկած փոփոխութիւնները , եւ այժմ յատենի աստ Գիւանին տեղեկարբերը հարցում կուղղէ այս մասին եւ մեկնութիւն կը խնդրէ :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Ատենապետ փաշան կը յիշէ անշուշտ որ Նախաձեռնութեան զիւանը ընդհանուր կերպով վերաքննելի կէտերն չօշափած եւ անցած է , առանց առաջարկութիւն բերելու , եթէ առաջարկութիւն մը բերէր , պէտք պիտի լինէր պատճառներն հետազօտել . բայց զայս չընելով այդ պատճառներն վերաքննութեան յանձնաժողովին ձգած է բացատրել . եւ այդ բացատրութիւնն է որ այսօր կը պահանջէ անկէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Որովհետեւ Ռուսիսեան էֆէնտին յանուն Նախաձեռնութեան զիւանին խօսեցաւ , ես ալ իբրեւ անդամ նոյն զիւանին պարտաւոր եմ պատասխանել որ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— (Ընդհատելով) Եւ ինչ բանի կուղէք պատասխանել . այն ինչ խնդիրը վարչական մարմնոյն կանոնակերպութեան վրայ էր , Ռուսիսեան էֆէնտին խօսք առնելով հարցուց թէ Վերաքննիչ յանձնաժողովը ինչ պատճառաւ մերժեր է արդի դրութիւնը , ես ալ փոխադարձ հարցուցի թէ ինչու Նախաձեռնութեան զիւանը ժամանակին այդ հարցումն չէ ուղղեր յանձնաժողովին : Այսպէս այժմ իմացուեցաւ յանկարծուստ որ Գիւանը յանձնաժողովն չէ կանչելու եւ իւր առաջարկած փոփոխութեանց պատճառներն չէ հարցուցեր : Այսպէս կըսէ ձեր տեղեկարբերն , եւ որ նուազ ցաւալի չէ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Բայց ինչպէս չէ հարցուցեր , պատճառներն հասկցուած են արդէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ըսէք ուրեմն .

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Թող ցոյց տայ այդ պատճառներն տեղեկագրին մէջ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Նախաձեռնութեան զիւանը ոչ միայն պատճառներն քննելու իմացեր եւ այսպէս յանձնաժողովոյ առաջարկութիւնը ընդունելի է գտեր , այլ եւ առաջարկած բաժանմանց անուններ ալ սահմանել է , եւ կրնաքահայրն ալ նոյն ինքն Ռուսիսեան էֆէնտինն է , որ Կրօնական , Քաղաքական եւ Տեսուչ ժողով-

ներն խորհուրդ անունով մկրտեց . եւ քանի որ նախորդ Քաղաքական ժողովէն եկած է ըսաւ Տեսուչ ժողովի հաստատութեան առաջարկութիւնը , պէտք չէ զայն փոխել . այլ անունը փոխել հէրիք համարեց : Եւ այս փոփոխութեանց պատճառներն արդէն յանձնաժողովոյ տեղեկագիրն բացատրած է նախորդ Քաղ. ժողովոյ առաջարկութեանց մասին մէջ :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— Կուզեմք հասկնալ թէ Փափազեան էֆէնտին իբրեւ տեղեկարբեր զիւանին կը խօսի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Իբրեւ զիւանի անդամ կը խօսիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ներեցէք ինձ ըսել , այս ամէնը դժբաղդութիւն մ'են Ազգային ժողովին համար . նախ՝ Նախաձեռնութեան զիւանէն տեղեկագիր մ'եկեր է . վերջը՝ իբր անոր ընդլայնումը կամ ամփոփումը երկրորդ տեղեկագիր մ'ալ եկաւ . եւ այսպէս . . .

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ.— (Ընդհատելով) Վնաս չունին ժողովին :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— (Շարունակելով) Թերեւս ձեզի համար չունենայ . բայց ժողովին համար այնպէս չէ : Ինչու ժողովը Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագիրը ձեզ յղեց . լուսաւորուելու համար . եւ դուք խնդրոյն շուրջը խաւար ու մթութիւն կը ծաւալէք այս կերպով :

Կըսէք թէ փոփոխութեանց պատճառներն չհարցուցիք . իսկ անդին զիւանի անդամ մը ասոր հակառակը կը պնդէ . որով հաւատ ընծայենք , որն ընդունինք կամ մերժենք :

ԻԽԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— (Ընդհատելով) Երկուքին ալ չէք հաւտար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Եթէ ժողովը կը հաւանի այս միջադէպը կը գոցենք . եւ վասն զի չկրցինք հասկնալ թէ Վերաքննիչ յանձնաժողովն ինչու փոփոխութեան ենթարկեր է մեր Վարչութեան արդի դրութիւնը , նոյն ինքն յանձնաժողովոյ տեղեկարբերէն կսպասենք որ բացատրէ մեզ խնդիրը :

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ.— Մեր ազգային գործերը , երեսփոխան տեսնաք , Վերաքննիչ յանձնաժողովն երկու տեսակ նկատեց . այն է յարաբերական եւ տեսչական , ինչպէս Սահմանադրութիւնը գծած է արդէն . Այս գործոց

երկու ճիւղն ալ Քաղաքական ժողովոյ յանձնուած է միահամուռ . յարաբերական ճիւղին մէջ Քաղաքական ժողովին գործը Բ. Գրան հետ է միշտ . իսկ տեսչական ճիւղը կը կազմեն ներքին բոլոր գործերն . ինչպէս են Գաստիարակութեան, Վանական, Կայուածական, Գատային, Ելմտական եւ Քաղային գործերն : Սահմանադրութեան հաստատութենէն ի վեր, որ եթէ չեմ սխալիր 85ին կսկսի, մեր ձեռքը ունեցած օրէնքը ցցուց մեզ որ Քաղաքական ժողովը զինքը յարաբերութեանց ճիւղին աւելի նուիրելու ստիպուած՝ չունի դիւրութիւն իւր ժամանակէն բաժին հանելու տեսչական գործոց . եւ այսպէս խորհուրդներէ եւ հոգաբարձութիւններէ ներկայացեալ խնդիրներն ստէպ երեսի վրայ կը մնան, եւ անդամալուծուեր, թշուառ վիճակի մը հասեր են Վարչութեան ստորակարգեալ այս ճիւղերը : Վերաքննիչ յանձնաժողովը տեսաւ զայս եւ դարման ուղեց ընձեռել : Օրինակով մը բացատրեմ . ներկայ Վանօրէից խորհուրդը հոչակաւոր վանքի մը համար կուղէ Քաղաքական ժողովոյ ներկայանալ եւ բանակցիլ, եւ երեք անգամ ունկընդրութիւն կը խնդրէ, եւ իւր առաջարկութեանց պատասխանը չընդունիր :

Զընդունիր, քաւ թէ անոր համար որ Քաղաքական ժողովն անփոյթ է կամ անտարբեր է իւր պաշտօնին մէջ, այլ վասն զի ժամանակ չունի լսելու . վասն զի իւր սեղանը լի է եւ բեռնաւոր յարաբերական ճիւղի վերաբերեալ բազմազան խնդիրներով, որոց մէջ նաեւ դատականը ոչ նուազ զբաղում կը պատճառէ ժողովին :

Եւ որովհետեւ համօրէն Ազգին եւ մեր ամենուս փափաքն ազգային գործերը՝ ներքին ու արտաքին՝ այնպիսի վիճակի մը մէջ զնել է որ շուտափոյթ տնօրէնութիւն ստանան, Վերաքննիչ յանձնաժողովն այս հանրական իղձը յարդիւնս ածելու համար ուղեց այնպիսի ժողով մը սահմանել, Քաղաքականէն զատ, որ անոր բեռը թեթեւցնէ, որ Ընդհանուր ժողովէն առնու ուղղակի իւր ծագումը, եւ որ նրման Քաղաքական ժողովին՝ Ազգային ժողովին պատասխանատու լինելով անօրինէ իւրովի ազգային ներքին գործերը, որ տեսչական մասը կը կազմեն : Ինչպէս անցեալ նիստին մէջ խօսեցայ արդէն Ուսումնական, Տնտեսական, Վանօրէից, Գատաստանական խորհուրդներ

կան, ամենն ալ Քաղաքական ժողովին ստորակարգեալ, ամենուն ալ իրաւասութիւնն չբփոթ, անորոշ, եւ ասոնց եւ ոչ մին կարող են ինքնուրոյն գործել եւ խնդիր մը տնօրինել : Եւ ինչպէս . Տնտեսական խորհուրդը որ եւ է խնդրոյ մասին տնօրէնութիւն մը կընէ, եւ սակայն գործադրելու համար Քաղաքական ժողովին դիմելու եւ անոր հաւանութիւնը ստանալու ստիպուած է . Քաղաքական ժողովը խնդիրն քննելու ժամանակ չունի, բայց եթէ օր մը դիպուածով իւր աչքին առջեւ ընկեի այն, եւ եղած տնօրէնութիւնը՝ թերի եւ անընդունելի գտնէ, չէ կարող ինքնին փոփոխել, այլ ստիպուած է Սահմանադրութեան այն ինչ յօդուածին համեմատ՝ վերստին խնդիրն նոյն խորհրդին դարձնել եւ անոր կարծիքն ստանալ : Իսկ եթէ Տնտեսական խորհուրդն սեւեռի պնդէ իւր տնօրէնութեան վրայ այն առեւն Քաղաքական ժողովն ազատելու համար ձեռքէն, պիտի լուծէ զայն վերջապէս : Ահաւասիկ այսպէս ամիսներ անցան, եւ խնդիրն իւր լուծումը չգտաւ կամ հաղիւ գտաւ : Այս երկարաձգութեան մէջ վնաս կայ անշուշտ Ազգին . բայց ով է պատասխանատուն՝ Տնտեսական խորհուրդը միթէ, ոչ . Քաղաքական ժողովն արդեօք . երբէք . վասն զի երկուքն ալ օրինաց համաձայն շարժեցան, եւ խնդրոյն գլխին վրայ իրենց իրաւունքներն գործադրեցին :

Այսպէս եւ Ուսումնական խորհուրդը պաշարուած է բիւրաւոր դժուարութիւններով : Եթէ կրթութեան խնդրոյ մը համար Կարնոյ Ուսումնական խորհուրդին պէտք ունենայ գիր մը ուղղելու, զայն պարտաւոր է նախ կեդրոնական Վարչութեան Քաղաքական ժողովին մատուցանել, անկէ Կարնոյ քաղաքական ժողովին պիտի յուղարկուի եւ յետոյ վիճակին ուսումնական խորհուրդին ձեռքն հասնի, եւ նոյն գրուն պատասխանը այսպէս միեւնոյն խորհուրդներէն անցնելէ ետեւ պիտի գայ հասնի ուր ուրեմն կեդրոնական Ուսումնական խորհուրդին ձեռքը . եւ ինչ որ է այն դժբաղդ խնդիրն որ այս թղթակցութեան նիւթ է եղեր, պիտի ստանայ ուր ուրեմն իւր տնօրէնութիւնը . եթէ հոն ալ օրինական այն ձեւերը, զորս քիչ մը յառաջ յիշեցինք, չկան ի գործ դրուելու : Ինչպէս ուրեմն այս կերպով հնար է ազգային վարժարանները բարեկարգել . ինչպէս

կարելի է գործ եւ արդիւնք յուսալ Քաղաքական ժողովէն որ այս 15 տարիներէ ի վեր ցարդ Ազգային ժողովին չէ կրցած բերել ծրարադիր մը ազգային կրթութեան խնդրոյն վրայ :

Այս բիւրաւոր դժուարութիւններն Վերաքննիչ յանձնաժողովն նշմարեց, եւ նախորդ Քաղաքական ժողովոյ խնամուուն մէկ առաջարկութեամբը բաժնեց ազգային գործոց յարաբերութեան եւ տեսչութեան ճիւղերը . եւ այս վերջնոյն համար առանձին ժողով մը կարգեց :

Եւ սակայն, չէ թէ ինչպէս՝ ոմանք կը կարծեն, Ուսումնական, Վանօրէից եւ Տընտեսական խորհրդոց եւ Կտակաց հոգաբարձութեան պաշտօններն մէկ ժողովի մը յանձնուելով չորս տարբեր գործեր ի մի ձուլուած են, այլ էապէս երկու են իրարու յարակից, եւ այն է Ուսումնական եւ Տնտեսական :

Կրթութեան խնդիրը դրամական միջոցներով կրնայ յառաջանալ, եւ այս միջոցներն հայթայթել՝ անտեսութեան վերաբերեալ խընդիր մ'է, եւ հոս ահաւասիկ կսկսի Տնտեսական խորհրդոյ պաշտօնը՝ միանալ Ուսումնականին հետ :

Վանքերն Ազգին բարոյական յառաջդիմութեան նուիրեալ հաստատութիւններ են . եւ այս նպատակին համար կալուածներ եւ դրամական միջոցներ ունին :

Այս միջոցներն զարգացնել՝ անտեսութեան խնդիր մ'է . եւ վանքերն իրենց բարոյական նպատակին ծառայելու վիճակին մէջ զնել՝ ուսումնական խնդիր մ'է . եւ ահաւասիկ հոս Ուսումնական եւ Տնտեսական խորհրդոց պաշտօնները կը միանան նորէն՝ Վանօրէից տեսչութեանը մասին : Իսկ Կտակաց հոգաբարձութեան պաշտօնը բոլորովին արնատեսականի կը վերաբերի, վասն զի Կտակաց խնդիրներն կալուածական եւ տնտեսական խնդիրներ են պարզապէս :

Ահա ասոնք են այն գլխաւոր պատճառներն, զորս ձեր Վերաքննիչ յանձնաժողովը նկատողութեան առած է . եւ անոնց վրայ յենլով իւր առաջարկութիւնը բերած է հոս :

Չուղեցիլ աւելի մանրամասնութեանց մըտնել . քաւ եւ շատ համարեցէք, խնդրեմ, այսքան բացատրութիւն, վասն զի արդէն մեր տեղեկագիրը պէտք եղած պատճառաբանութիւններն ունի իրեն հետ այնքան, որքան չը

կարծէք, եւ չգտնէք Ռուսիանէն էֆէնտին անոր մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Ժողովը լսեց այն պատճառներն, որոց վերաքննիչ խումբը յենլով վարչական մարմնոյն կազմակերպութեան մէջ փոփոխութիւն մտցնել պատշաճ է դատեր : Եթէ ժողովն հերիք կը համարի այսքան բացատրութիւն, կանցնինք անմիջապէս փոփոխութեան ենթարկուած կէտերուն . եթէ ոչ՝ կրնա՞ք շարունակել տակաւին :

ՉԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛, հերիք են :
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.— Շատ աղէկ . կանցնիմք ուրեմն այժմ փոփոխելի կէտերուն :

ԻԻԹԻԻՃԱՆ Կ. ԷՖ.— Արդի վարչական կազմակերպութեան դրութիւնը թերութիւններ ունի . անուրանալի է այս, եւ որոնք շատոնց ի վեր զգալի եղած են : Իրաւունք ունի Վերաքննիչ յանձնաժողովն բարեփոխութիւն առաջարկելու, եւ այս մասին մենէ ոչ ոք կրնա հակառակել անոր : Բայց այդ յանձնաժողովն մը կառաջարկէ, եւ մենք որքան պատճառին վրայ անոր հետ կատարեալ համամտութեան մէջ գտնուինք, առաջարկուած միջոցին վրայ համակարծիք չենք իրեն հետ, եւ այս կէտէն կը բաժնուինք իրմէ : Իմ կարծիքս այն է որ փոխանակ ներքին գործոց համար նոր ժողով մ'ալ սահմանելու՝ Քաղաքականէն անկախ եւ ուրոյն, լաւագոյն է նոյն իսկ Քաղաքական ժողովին մէջ գործոց բաժանմանց դրութիւնը հաստատել, եւ քանի մը ճիւղի բաժնելով զայն՝ հատուած մի եւս ներքին գործոց սահմանել : Վասն զի Քաղաքական ժողովէն անկախ ուրիշ համազօր նոր ժողով մը սահմանել մեր Սահմանադրութեան նոյն իսկ հիմնական սկզբանց եւ տէրութեան արսօնութեանց չկրնար համաձայնիլ : Քաղաքական ժողովն յարաբերութեան պաշտօն ունի . ներքին գործոց համար տեսուչ խորհուրդներ կընտրէ, եւ անոնց վրայ հսկելու պաշտօն ունի . իւր յանձնաժողովներն են են անոնք, եւ պաշտօնը հիմնովին՝ եթէ զիտանք ուշադրութեամբ, իրեն կը պատկանի . ուրեմն նոյն սկզբունքով կրնամք Քաղաքական ժողովոյ սահմանին մէջ բերել զետեղել այդ զանազան ստորակարգեալ ճիւղերը, եւ ինչ որ իրն է արդէն էապէս, ուղղակի դարձնել իրեն :

Այս նպատակաւ արդէն զանազան ծրար

զրեր եկած են եւ ամենքը միահամուռ նոյն նպատակը կենթադրեն :

Այս բաժանման օրէնքը կը տեսնուի նաեւ Պետական խորհրդոյ մէջ , որ իւր մէջ զանազան հատուածներու բաժնուած կը գործէ : Նոյնպէս եւ մեր Քաղաքական ժողովը՝ փոխանակ 14ի 24 անդամէ կրնայ բաղկանալ , եւ զանազան ճիւղերու՝ որքան կը պահանջեն մեր գործոց տեսակները՝ բաժնուելով Տնտեսականի , Ուսումնականի , Գատաստանականի , Ելմտականի եւ այլոց համար մէն մի հատուած կը յատկանան , եւ իւրաքանչիւրն իւր սահմանին մէջ կը գործեն : Վերջապէս Քաղաքական ժողովն ըստ իս այնպիսի վիճակի մը մէջ դնել պէտք է , որ զիւրութիւն գտնէ ազգային գործերն տնօրինելու , եւ այս վիճակին մէջ զընելու համար զինքը քանի մը ճիւղի բաժնելու , եւ այս բաժանման համեմատ պաշտօնները բաշխելու ենք :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութեան դէմ խօսեցաւ Իւթիւճեան էֆէնտին , առարկելով թէ տէրութիւնն ալ չընդունիր որ Քաղաքական ժողովոյ համազօր նոր ժողով մ'ալ հաստատուի :

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Ը-ԳՅԷԼ) Ո՛չ , տէրութեան շնորհած արտօնութեան անհամաձայն է ըսի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շ-ԳՅԷԼ) Եւ սակայն չբացատրեցիք թէ ինչ պատճառի համար չհամաձայնիր : այդ առաջարկութիւնն իրաւացի լինէր թերեւս , եթէ հարկաւորութիւն լինէր տեսուչ ժողովը Բ. Դրան վաւերացմանը ենթարկելու : բայց քանի որ այնպէս չէ , այդ կողմէն երբէք դժուարութիւն մը չկայ , որ մեր ընթացքին խափան լինի : Յանձնաժողովոյ առաջարկութեան դէմ Իւթիւճեան էֆէնտի այս առարկութիւնը յարուցանելէ ետեւ՝ իւր կողմէ ուրիշ առաջարկութիւն մը կը ներկայացնէ , որով ինք ալ հաստատութիւն եւ կարեւորութիւն կ'ընծայէ Վերաքննիչ յանձնաժողովոյ ծրագրին :

Վասն զի ինչ է վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրին ոգին . - փոխանակ Քաղաքական ժողովէն երեք խորհուրդներ եւ մէկ հոգաբարձութիւն ընտրուելու , ասոնց միացմամբ մէկ Տեսուչ ժողովոյ մը Ազգային ժողովէն ընտրուիլը , եւ անոր միջոցաւ Ազգային ներքին գործոց տնօրէնութիւնը :

Միայն թէ Իւթիւճեան էֆէնտի կողմէ որ Քաղաքական անուան ներքեւ չորս եւ թերեւս աւելի ժողովներ ունենանք , եւ իւրաքանչիւրն անկախ եւ ինքնուրոյն գործեն , ապանձին իրաւասութեամբ . մինչդեռ Վերաքննիչ յանձնաժողովը պարզապէս երկու ժողով կառաջարկէ երկու անուան տակ՝ Քաղաքական եւ եւ Տեսուչ , իւրաքանչիւրն իւր ճիւղին մէջ Ազգային ժողովն համարատու , եւ աղատօրէն գործելու կարող : Մասնեցէք , տեսնեք իմ , որ 20 կամ 24 անդամոց անուաններ պիտի ներկայանան Բ. Դրան , եւ այս ամենը համերայնաբար Քաղաքական ժողովոյ բոլոր ճիւղերուն գործառնութեանց համար պատասխանատու պիտի լինին փոխադարձ . եւ կը կարծէք թէ գտնուին այնպիսի մարդիկ , որք այսպէս մեքենաբար յանձն առնուն այնպիսի գործերու՝ որոց մասնակցած չեն , պատասխանատուութիւնը :

ԻԻԹԻԻՃԵԱՆ ԷՖ. — Իւրաքանչիւր ճիւղ իր մասին պատասխանատու է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ լաւ , ուրեմն իւրաքանչիւր ճիւղ ազատ եւ անկախ ըլլալով միւս ճիւղերէն , իր մասին համար ալ անուն մը պիտի ունենայ հարկաւ . եւ ինչ պատճառ կայ ըսել Քաղաքական ժողովոյ Ուսումնական ճիւղը կամ Տնտեսական ճիւղը , եւ չըսել Տեսուչ ժողով :

Մեր ամենէն փափուկ խնդիրը՝ յարաբերութեանց խնդիրն է , որ Վերաքննիչ յանձնաժողովը Քաղաքական ժողովին կը թողու . միեւնոյն թէութիւններով զորս կը տրամադրէ մեր Սահմանադրութիւնը : Ի՞նչ դժուարութիւն կայ որ անկէ անդին ներքին գործոց համար չունենայ Ազգը առանձինն Տեսուչ ժողով մը , ինչպէս ունի իր կրօնական գործոց համար :

Տէր Մատթէոս վարդապետ խիստ աղէկ բացատրեց վերաքննիչ Յանձնաժողովոյ ծրագրին այս մասը , եւ այս փոփոխութիւնը ըստ բաւականին պատճառաբանեց , ցուցնելով Վարչական ժողովոց եւ խորհրդոց եւ հոգաբարձութեանց մէջ եղած յարաբերութեան եւ պատասխանատուութեան շփոթութիւնները : Եթէ 15 տարիէ ի վեր Ազգն չկրցաւ իր ներքին գործոց ուղղութիւն մը տալ , չկրցաւ ուսումնական մասին իրական յատկազօրութիւն մը տեսնել , որուն համար շատ անգամ այս ժողովին մէջ ալ գանգատողներ գտնուած են , ինչպէս նաեւ դուրսը շատերուն՝ նոյն իսկ ը-

րագրաց կողմէն ալ գանգատ լսուած են , պատճառը ինչպէս փորձը ցուցուց , ուրիշ բան չէ , բայց եթէ Քաղաքական ժողովին եւ Ուսումնական խորհրդին մէջ գտնուած արդի սահմանադրական կապը , որով ոչ մէկն ատանց միւսին կարող է գործել եւ երկուքն իրարմով միանգամայն կապուած են . եւ եթէ երբէք երկուքն ալ միարանելու առիթ ունեցած են , յաղթելով իրենց մէջ յարաբերական խոչընդոտներուն , ան ատեն ալ արտաքին խոչընդոտներ արդեւք յարուցած են : Այսպէս հասկընալ պէտք է Տնտեսականին համար , Վանականին եւ այլոց համար : Վանական խորհուրդը յիշելով , միտքս օրինակ մ'եկաւ , որ հոս յառաջ բերել պատշաճ կը համարիմ :

Արդ ինչէք անշուշտ որ երբ Վանօրէից խորհրդոյ համարատուութեան տեղեկագիրն եկաւ Ազգային ժողովին , խնդիր ելաւ թէ ինչո՞ւ ուղղակի եկած է ժողովին , մինչդեռ Քաղաքական ժողովին գործն է առնուլ Տեսուչ խորհրդոց ու հոգաբարձութեանց համարը . բայց գիտէք թէ ինչ է այս Տեսուչ խորհրդոց համարատուութիւնը : Երբ սահմանադրական տարին կը բոլորի՝ կը գրէ Քաղաքական ժողովն անոնց որ իրենց գործողութեանց համարը տան : Ի՞նչ համար ունին սակայն տալու . ինքնօրինաբար խընդիր մը տնօրինելու կարող չեն արդէն եւ ամէն գործի համար Քաղաքական ժողովոյ հաւանութիւնը կ'ստանան . ուստի եւ մշտնջենապէս համարատու են անոր : Բայց ինչ ընեն . որովհետեւ տարեկան համարատուութիւնը օրէն է , հետեւաբար իրենց այն ամէն գործողութեանց , որոց վրայ արդէն Քաղաքական ժողովոյ հաւանութիւնն ստացած են , մէկ հաւաքածոյն կը չլինեն , եւ զայն Քաղաքական ժողովոյ կը մատուցանեն , ըսելով . - ինչպէս գիտէք , այս ինչ խնդիրը այսպէս , եւ այն ինչ խնդիրն՝ ինչպէս ժողովը որոշած էր , այնպէս կարգադրեցինք եւն : Քննեցէք բոլոր խորհրդոց համարատուութեան տեղեկագրերն , եւ պիտի տեսնէք որ գրեթէ ամէն խնդիր Տեսուչ խորհուրդներն արդէն Քաղաքական ժողովոյ որոշման ենթարկելով՝ տնօրինած են :

Արդ՝ եթէ Քաղաքական ժողովին գիտութեանը համար խորհուրդներն այդ հրատարակութիւններն կ'ընեն , աւելորդ են , վասն զի մեծ մասն անոր գիտութեամբը տնօրինուած գործեր են , եւ ինքնին տնօրինեալ մասն ալ

փոքրիկ եւ աննշան բաներ են , որոնք հրատարակութեան կարտութիւն չունին , եւ Քաղաքական ժողովը զանոնք գիտնալու համար կրնայ ձեռագիրն ստանալ անոնցմէ եւ կ'որդալ : Բայց ասանկ չէ . խորհրդոց համարատուութեան տեղեկագրոց հրատարակութեան Ազգային ժողովս պիտի լսէ եւ ինչնայ անոնց վերաբերեալ ազգային գործոց ընթացքն ու վիճակը . որչափ ոլորապտոյտ ընթացք : Եւ սակայն ոչ Քաղաքական ժողովն բացարձակ պատասխանատու կ'երեւայ , վասն զի իրաւունք ունի ըսելու թէ ես ընտրող մ'եմ , եւ խորհրդէն գալիք առաջարկութեանց քննիչ եւ գործադիրը . որչափ բան որ եկաւ , եւ որչափ ժամանակ որ ունեցայ , այնչափ գործեցի . եւ ոչ խորհուրդը , վասն զի նա ինքնին անկախաբար գործելու իրաւունք չունենալով , ամէն ատեն Քաղաքական ժողովին դիմելու եւ անոր որոշմանց կարօտ գտնուած է . թողունք որ խորհրդոց այս վիճակը զիրենք վարչական ազդեցութենէ ալ զրկած է : Ի՞նչ է այս անել լարելիութիւնը , ուր օրէնսդիրները զմեզ տարեր նետեր են , եւ ուր մոլորեալ կը թափառինք :

Արդեօք եկած հասած չէ ժամանակը , որ Ազգին ներքին կենսական գործերը , Ուսումնական , Տնտեսական , Վանական եւ Կտակաց , Ազգային ժողովս ինք ստանանէ , ատոնց պաշտօնեաներն ընտրէ , այդ խնդրոց վրայ եղած առաջարկութիւնները ինք լսէ ասոնց միջնորդի հարկաւորութիւն ունենալու , եւ թէ պաշտօն եւ թէ պաշտօնեայ իրենց արժանաւոր կարեւորութիւնն ստանալով բարձրանան , եւ ուղղակի համարատու ըլլան ժողովիս :

Վերաքննիչ յանձնաժողովն փորձառութեամբ տեսաւ թէ այդ ժամանակն հասած է . ուստի եւ իր այդ առաջարկութիւնը բերաւ : Եւ արդարեւ եկած հասած է այն ժամը որ մեր ներքին գործոց ուղղութիւն մը տրուի . եւ մեր այս մասին վայելած անկախութիւնը իւր օգուտը յառաջ բերէ : Իւթիւճեան էֆէնտի առաջարկութիւնը ուրիշ հետեւանք մ'ալ ունի , որ նուազ պատճառ չէ շփոթութեան , զոր աստ կ'ուղեմ յառաջ բերել , եթէ մէկ անուան ներքեւ չորս ժողով միացնենք , երբ անոնցմէ մին իւր ճիւղին մէջ այնպիսի գործ մ'ընէ , որ պատասխանատուութիւն հրաւիրէ իր վրայ , եւ նոյն ճիւղին լուծուած հարկաւորի այն ատեն՝ վասն զի միահամուռ Բ. Դոնէն վաւերա-

ցեալ են անոնց անուններն . չորս ճիւղերն մի-
անգամայն հարկ պիտի լինի լուծել . եւ այս-
պէս ամենէն գէշ բանն ըրած պիտի լինիմք :

ԻԽԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Միայն այն ճիւղին
լուծուածը կը հարկաւորի , վասն զի ամէնքն ալ
առանձին պաշտօնով վաւերացեալ են :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ձեռ մաներ այդ
կերպով ծագելիք անտեղութիւնները քննելու .
բայց հարկ կը համարիմ այս բեմին վրայէն յայ-
տարարել թէ , Ուսումնական , Տնտեսական ,
Վանական եւ այլ ներքին գործոց պաշտօնէից
Բ. Գրնէն վաւերացումն ամենեւին պէտք չու-
նի . ինչ որ ալ ըլլայ ժողովին տրամադրու-
թիւնը ս.յս խնդրոյն լուծուած մը տալու մասին ,
իր խորին ուշադրութիւնը կը հրաւիրեմ այս
վաւերացման առաջարկութեանը վրայ , որուն
վրայ եթէ հարկ ըլլայ , դարձեալ կը խօսիմ :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԷՖ. — Թէեւ աւելորդ է
ըստ իս կեդրոնական Վարչութեան պաշտօնին
քննութիւնը քննել , զի ամենքս ալ գիտենք
զայդ , սակայն եղած առաջարկութիւններն
կը հարկադրեն զիս՝ զայն միանգամ չօշափել եւ
քանի մը գիտողութիւն ընել այս մասին :

Յարաբերական եւ տեսչական ճիւղերու՝
այն է ներքին ու արտաքին գործոց կը բաժ-
նեն Քաղաքական ժողովոյ պաշտօնը , եւ իւ-
րաքանչիւրին ուրոյն սահմաններ կը գծեն .
Գիտէք սակայն թէ ինչ բանի վրայ մեր ար-
տաքին յարաբերութիւնը կը կայանայ . — գաւա-
ռականէն սկսելով Վանական , Տնտեսական ,
Կտակաց եւ Ելեւմտից գործերն են , որք յա-
րաբերութեանց նիւթ կընծայեն շատ անգամ :

Այդ գործերն կանջատեն , եւ կառավար-
կեն Տեսուչ ժողովոյ մը յանձնել որ ուղղակի
Ընդհանուր ժողովէն ստանայ իր գոյութիւնը ,
եւ առ այն լինի համարատու :

Սակայն Քաղաքական ժողովը որ Ազգային
ժողովոյ համարատու է եւ միանգամայն պա-
տասխանատու ի հարկին Բ. Գրան , ինչպէս
պատասխանատու պիտի կարողանայ ըլլալ Տե-
սուչ ժողովին անօրէնութեանցը , քանի որ ան-
մասն կը գտնուի կատարուած իրողութիւննե-
րուն :

Այս պահանջումէն աւելի տրամաբանու-
թեան հակառակ բան չեմ կրնար տեսնել ես .
(ՁԱՅՆԵՐ. — Կեցցէ) :

Երբ Իւթիւճեան էֆէնտի պահ մը առաջ
կառավարիչը Քաղաքական ժողովն չորս հատ-

ուածի բաժնել , եւ անձնիւր հատուածի ար-
տօնութիւնն ապլ իւր ճիւղին մէջ ձեռնազատ
եւ ինքնուրոյն գործելու , նոյն ինքն Փափագ-
եան էֆէնտի քննելով խնդիրն ի հիմէն , կա-
ռարկէր որ ինչպէս համերաշխաբար այդ հատ-
ուածներն պատասխանատու կրնան լինել այն
անօրէնութեանց , զորս իւրաքանչիւրն գոր-
ծադրեր են՝ իրարմէ անկախ կերպով : Ինչպէս
ուրեմն Փափագեան էֆէնտի կը հաճի որ Քա-
ղաքական ժողովն պատասխանատուութիւն
ըստանձնէ կառավարութեան առջեւ՝ այդ ան-
կախ Տեսուչ ժողովին համար :

Ես անկարե ի կը գտնեմ զայս . եւ արդա-
բեւ վարչական արդի կազմակերպութիւնը որ-
քան ալ հարկաւոր լինի գործնական գրութեան
մը վերածել , սակայն այսպէս Տեսուչ ժողով
մը հաստատել՝ քաղաքականին համազօր , եւ
պատասխանատուութեան բոլոր ծանրութիւնը
այս վերջնոյն վրայ բեռնաւորել , մեր վարչա-
կան ընթացքին աւելի կ'նծիւ՝ քան գիւրու-
թիւն կընծայէ : Իսկ զայլ Ս. Մատթէոս վար-
չապետի ակնարկութեանց , որքան եւ խընդ-
րէն օտար ալ լինին , այլ վասն զի Քաղաքա-
կան ժողովին կը պատկանին՝ չեմ ուզեր ան-
պատասխանի թողուլ :

Վանական խորհրդոյ մէկ առաջարկութիւ-
նը կը յիշէր որ ժողովն նկատողութեան չէ ա-
ռեր , եւ այնպէս ուրիշ նմանօրինակ դատա-
կան պարագայ մը . եւ նախ սա կըսեմ որ դա-
տական բան մը Քաղաքական ժողովին չպատ-
կանիր , եւ . . .

Ս. ՄԱՏԹԷՈՍ Վ. — (Ընդհանուր) Ախալ
հասկցուած է խնդիրն , ոչ դատական պարա-
գայ յիշեցի եւ ոչ ժողովն քննադատեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ , այդ բա-
ցատրութենէն գոհ եմք . ի խնդիր դարձէք ,
Ատենաբան էֆէնտի , եւ եղրակացուցէք :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Վանօրէից խոր-
հրդոյ այն առաջարկութիւնը զոր Ս. Մատ-
թէոս վարդապետն յիշեց , Քաղաքական ժողո-
վը նկատողութեան առած է արդէն , եւ բա-
նագնացութեան մէջ է այս մասին , յորմէ տե-
ղեկութիւն չունի ինք :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԷՖ. — Ի վերջէ իմ կարծի-
քս այն է թէ չենք կարող Քաղաքական ժո-
ղովոյ պաշտօնին բնութեան , ընտրութեան եւ
Բ. Գրնէն վաւերացման եղանակին հպիլ . այլ
կրնամք Տեսուչ խորհուրդներն ի մի ձուլել , եւ

Իւթիւճեան էֆէնտի առաջարկած հատուած-
ներու բաժանումը անոր մէջ կատարել . սա-
կայն միշտ պատասխանատու կարգելով զայն՝
Քաղաքական ժողովին , ինչպէս են հիմա :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կը գիտեմ որ այս
օրէնսդրական վիճարանութեանց ատեն ընդ-
դիմախօս կողմերը միշտ Սահմանադրութեան
օրինագրքին հայերէն բառերը կը կշռեն . եւ
անոնց նշանակութեան ուժովը կը խորհին :
Արժան է սակայն գիտել որ Տէրութենէն վա-
ւերացեալ օրինագրքը տաճկերէն լեզուով
խմբագրուած է , եւ անոր գործածած բառերը
քիչ մ'ալ ի կշիռ դրուելու են :

Ինչ որ հայկական բնագիրը կրօնական եւ
Քաղաքական ժողով կանուանէ , տաճկերէնը
Վեճիկէ բառէ եւ ճեմաճի կը կոչէ , որ յայտ է
թէ աշխարհային եւ հոգեւոր գործոց ժողով
ըսել է , եւ որոնց մէջ իմաստից մեծ տարբե-
րութիւն կայ : Կը հետեւի ուրեմն որ երկու
տեսակ նկատուած են մեր ազգային Վարչու-
թեան գործերը :

Բայց արդելք մը չկայ Տեսուչ խորհուրդ-
ներն միացնելու եւ մարմին մը կազմելու , եւ
շատ աղէկ կրնայ լինիլ , միայն թէ ես համա-
միտ չեմ բնաւ ժողով բառը փոխելու , որ մէծ-
լիս ըսել է . ուշադրութեան առէք այս բառը ,
եւ այսպէս կը լուծուի նաեւ Ռուսիանէն է-
ֆէնտի յորջորջման խնդիրը :

ԻԽԹԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պատասխանատու-
թեան խնդիր մը յուզուեցաւ հիմա . այդ ալ
իմ առաջարկութեանս մէջ իւր լուծումը կըս-
տանայ , շփոթութիւնը կանհետի եւ համարա-
տուութեան եւ պատասխանատուութեան կա-
րեւոր կէտն ալ կապահովի : Ընդհանուր ժո-
ղովը , զոր օրինակ՝ 21 անգամէ բաղկացեալ
Քաղաքական ժողով մը կընտրէ , երեք հատ-
ուածի բաժնուած , մին յարաբերութեան , միւ-
սը անտեսութեան եւ երրորդը ուսումնական
գործոց յատկացեալ , եւ արդէն այս երեք ճիւ-
ղին մէջ կրնան ամփոփուիլ մեր ազգին բոլոր
գործերը , իսկ Ելեւմտից եւ Հիւանդանոցի Հո-
գաբարձութիւններն անտեսական մասին տակ
կը պահուին , եւ վանական գործերը մասամբ
ուսումնականին եւ մասամբ անտեսականին կը
վերաբերին արդէն , կայ դատաստանական
մաս մ'ալ , զայն եւս Քաղաքականին մաս հա-
մարելով՝ հատուած մ'ալ կրնայ անոր սահ-
մանուիլ այդ ճիւղին : Եւ այսպէս Քաղաքա-

կան ժողովը չորս ճիւղ կուեննայ . իւրաքան-
չիւրը զատ զատ պաշտօնին յարմար վեց կամ
եօթ անգամէ կազմուած , եւ այս ամէն հատ-
ուածները Քաղաքական ժողովոյ ամբողջացու-
ցիչ մասերը լինելով՝ իւրաքանչիւրն իրենց
բաժնին ինկած գործերը կը տնօրինեն , եւ հա-
մարատու կը լինին Ազգային ժողովոյ , եւ
ժողովն կը գիտնայ թէ իւրաքանչիւր պաշտօնի
համար մի ընտրեցինք եւ ուսկից ինչ պիտի
պահանջէ : Այս եղանակու պարզ եւ գործ-
նական ձեւ մը կառնու վարչական գրութիւնը ,
համարատուութեան եւ յարաբերութեան կըն-
ծիւր չմտար եւ վարչական գործերն արդի ան-
պատեհութիւններէն կազատին :

ՊԱՄՄԱՃԵԱՆ Ս. — Տեղեկաբեր Հայր սուր-
բը վերաքննութեան պայմանն եղող փորձա-
նական գիտողութիւններ մէջ բերելով յայտ-
նեց թէ այս ինչ պատճառներու համար Քաղ-
ժողովն յերկուս բաժնել հարկ եղած է : Իրա-
ւի իւր պատճառներն տրամաբանական երեւ-
ցան ինձ , բայց իւր առաջարկած փոփոխու-
թիւնը օգտակար է , թէ՛ ոչ , լաւ ի միտ առ-
նելու համար պէտք է աղէկ կշռել որպէս զի
ի վերջէ չ'ստղանանք :

Եւ ինչպէս կրնայ ըլլալ այս . անշուշտ
ուրիշ ազգերու օրինակներն , կամ ա-
մենուստ ընդունուած հանրական սկզբունք-
ներն քննելով եւ անոնց հետեւելով : Գիտէք
որ գործոց բաժանումը վաղընդփոյթ յառաջ
երթալու միջոց մ'է . ուստի այս սկզբան վը-
րայ յենելով՝ գործող մարմիններու պէտք է
յանձնել Վարչութեան ամեն ճիւղի գործերը ,
ինչպէս կրնեն լուսաւորեալ երկիրներու եւ
օրինաւոր կառավարութեանց մէջ . եւ միա-
պէս կը հաստատեն բաժանման սկզբունքը ,
գանձային եւ պետական ամեն գործերու յա-
տուկ պաշտօնէութիւններ կարգելով : Ուստի
Տեղեկաբեր Հայր սուրբին համամիտ եմ բա-
ժանման սկզբան մասին . բայց Վարչութեան
գործերը միայն երկու ճիւղի բաժնել՝ բաժան-
ման սկզբան հակառակ է . այլ պէտք է գոր-
ծերն իրենց բնութեան ու տեսակին համեմատ
զատ զատ մարմիններու յանձնել :

Իսկ զայլով պատասխանատուութեան խընդ-
րոյն՝ յայտնի է արդէն որ մեր վարչական գը-
րութեան մէջ տիրող եւ հրամայող մարմինը
Երեսփոխանական ժողովն է միայն , որու փո-
խանորդն է Քաղ . ժողովը , ինչպէս կայսեր

փոխանորդն է Եպարքոսը, որ իրեն հետ գործակիցներ ունի՝ իրեն պատասխանատու է, եւ ինքն ալ՝ ամենուն համար պատասխանատու է: Ճշմարիտ սկզբունք մ'է այս, զոր Սահմանադրութիւնը ընդունած է, եւ որով Քաղ. ժողովն ամենուն համար՝ Ընդհ. ժողովին, եւ ամենքն ալ իրեն պատասխանատու են: Արդ՝ այս սկզբանց եւ օրինակներուն կոթնելով՝ չեմ ընդունիր Վարչութեան բոլոր գործերը երկու ժողովի յանձնելու առաջարկութիւնը, ինչպէս Մամիկոնեան էֆ. շնորհուեց. եւ կը պնդեմ որ եթէ փորձը փոփոխութիւն ընել կը հարկադրէ զմեզ, գործոց միացումն շնտարար է, եւ բաժանման դրութենէն զատ ուրիշ միջոց չկայ մեր առջեւ:

ԳՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Նախագահ Սրբազանը երկու խօսք ըրաւ, բայց անոր մէջ մեծ նշանակութիւն եւ հոգի կայ իրաւ է որ մենք Սահմանադրութեան հայկական բնագիրը կը նկատենք միշտ, եւ բառերուն նշանակութիւնը հարեւանցի կը դիտենք ու կանցնինք. բայց երբ մարդ Քաղ. ժողովոյ անդամակցութիւն ընէ, այն ատեն կը հասկնայ գործնականապէս անոնց նշանակութիւնը եւ կը համոզուի, թէ անոնք՝ որ այդ օրինագրքին հաստատութեանը աշխատած են, որքան դժուարութիւններ կրած են:

Կրտսն թէ ինչ պէտք է Ուսումնական, Ելմտական, Կտակաց գործոց համար զատ զատ զատ ճիւղեր սահմանել. միացնենք ուրեմն եւ մէկ ժողով մը կազմենք:

Սակայն ինչ օգուտ օր մը կրնանք քաղել այս բաժանումէն, ինչպէս կը քաղենք արդէն. Պատրիարք մը կրնայ գիտնալ, Կտակաց հոգաբարձութիւն կրտսնք ու կանցնինք. չենք գիտեր թէ տաճկերէն թարգմանուած ատեն՝ ինչ օգուտ եւ ազդեցութիւն ունի: Ես անձամբ գիտեմ որ Պատրիարքարանի վաւերացուցած մէկ կտակը՝ օրինաց հակառակ էր թէեւ, բայց այդ արտօնութիւնը Պատրիարքարանի տրուած է ըսուելով՝ Բ. Գուռը ճանչցաւ զայն, ու Սահմանադրութեան ուժով ապահովուեցաւ:

ՆՈՒՐԵԱՆ ԷՖ. — (Ընդհ. ժողով) Այս տեսակ կտակաց համար տէրութիւնը ուրիշ օրէնք ունի արդէն:

ԳՕԼՕԼԵԱՆ ԷՖ. — (Շարժ. ժողով) Ուստի կ'եզրակացնեմ, փոխանակ տեսուչ խորհուրդներն ու հոգաբարձութիւններն միացնելու:

Չանանք, եթէ հնար է, անոնց թիւը բազմապատկել, այս պատեհութիւնը ձեռքէ չհանելով:

Մինչեւ ցարդ տեսանք որ երբ Քաղաքական ժողովը անձանձիր կաշխատէր, գործ մը չէր մնար: Կը յիշեցնեմ Ատենապետ փաշային՝ այն օրերը, յորում Քաղաքական ժողովոյ անդամակից էինք միասին, սեղանին վրայ 800 կտոր գործ կար դիզուած, եւ 40 օր վերջը ոչ մին կերելէր:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդհ. ժողով) Նախորդ ժողովի մը գործունէութեան վրայ կը խօսի օրինակով. թող ուրիշ մ'ալ անգործութիւնը օրինակով ու դէպքով հաստատէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թշնամանելէ հետի են ատենաբանին խօսքերը. եթէ արդի Քաղաքական ժողովին համար վիրաւորիչ ակնարկութիւն մ'ընէր, իրաւունք ունէինք բացատրութիւն ուզելու իրմէ, բայց իւր խօսքին մէջ թշնամանքի ստուեր մ'անգամ չերելիր: Կը հրաւիրեմ ուրեմն ատենաբան էֆէնտին, շարունակել իւր խօսքը:

ԳՕԼՕԼԵԱՆ ԷՖ. — (Շարժ. ժողով) Ինչ որ խօսեցայ, ուրիշը նշաւակելու մտք չէր ընում. իմ կարծիքս այն է որ փոխանակ Վարչութեան զանազան ճիւղերը միացնելու, աւելցնենք անոնց թիւը, եւ եթէ չենք կարող զայս ընել՝ ներկայ վիճակը պահենք գէթ:

Պատասխանատուութեան խնդրոյն գալով՝ խօսք եղաւ որ իւրաքանչիւրին՝ իրեն վերաբերի: Ազգային որ ժողովոց մէջ այն տեսակ գործ մը կայ, որուն ծայրը Բ. Գրան հետ յարաբերութիւն մը չունենայ. կուզէ տնտեսական ըլլայ, կուզէ վանական կամ ելեւմտից, ամենքն ալ առնչութիւն ունին Բ. Գրան հետ: Քանի որ այս այսպէս է, ըսել է միջնորդ մը պէտք է. եւ Բ. Գուռը զՊատրիարքը կը կանչնայ միջնորդ յարաբերութեան. եւ եթէ օրին մէկը անարժան Պատրիարքի մը հանդիպելու դժբաղդութիւնը ունենանք, Քաղաքական ժողովը կայ, եւ վերջապէս Պատրիարք ու Քաղաքական ժողով պատասխանատու են բոլոր գործառնութեանց համար:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ինչ որ յարաբերութեան մասին խօսել կուզէի, խիստ լաւ կերպով բացատրեց Մամիկոնեան էֆէնտին, որ իբր Քաղաքական ժողովոյ անդամ մեծ փորձառութիւն ունի ի հարկէ. հետեւաբար իմ խօսելիքս խիստ կարճ է:

Տեսուչ խորհրդոց միացուցման առաջարկութիւնը նպատակ ունի իրեն՝ գործոց արագ կատարումը. եւ այս նպատակին հասնելու համար կրնայ Քաղաքական ժողովն մասնախումբ մը դնել իւր կողմէ, որ տեսուչ խորհուրդներէն եկած խնդիրներն կը նախաքննէ, եւ պարզուած ու զտուած՝ Քաղաքական ժողովոյ որոշման եւ հաւանութեան կը ներկայացնէ, եւ այսպէս այդ մասնախորհուրդն Քաղաքական ժողովին գործը կը դիւրացնէ:

Այս է իմ կարծիքս, եւ բոլորովին դէմ եմ տեսուչ խորհրդոց միացուցման:

Այս պահուս ժողովը քառորդ ժամու չափ դադար կառնու, եւ յետոյ ատենաը բացուելով կը շարունակուի կրկին:

Տ. ՄԱՏԹԷՈՍ Վ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ամենէն առաջ Իթիւճեան էֆէնտի խօսելով, կը նշուի այն փաստերը՝ զոր Վերաքննիչ յանձնաժողովը յառաջ կը բերէ վարչական մարմնոյն կազմակերպութիւնը փոխելու համար, բայց նշանակուած դարմանի մասին համամիտ չերելիր եւ կառավարկէ՝ փոխանակ Տեսուչ ժողով մը կարգուելու, նոյն իսկ Քաղաքական ժողովը քանի մը հատուածներու բաժնել. եւ այսպէս Իթիւճեան էֆէնտի միւսնոյն բանը կըսէ, այն տարբերութեամբ որ մէկ անուան ներքեւ կուզէ կատարել բաժանումը:

Չեմ կրնար ըմբռնել սակայն թէ զատ զատ ճիւղեր երբ ընտրուին յանուանէ, եւ չորս հատուած միանգամայն Բ. Գրան վաւերացման ներկայանան, անձնիւր հատուած միայն իւր բաժնին ինկած գործոց պատասխանատու է, թէ ոչ՝ բոլոր աշխարհական գործոց համար. ինչպէս Սրբազան Պատրիարքը բառին նշանակութեամբը ըսաւ: Բայց տեսչութեան ճիւղին մէջ ինչ պատասխանատուութիւն կայ, երբ Վանօրէից խորհուրդը վանքերուն մէջ ժառանգաւորաց զպրօցներ հաստատելու ջանայ, երբ Տնտեսական խորհուրդը թաղականէն հաշիւ պահանջէ, ինչ պատասխանատուութիւն կայ հոս Բ. Գրան առջեւ, Իրաւ աշխարհային գործեր են, բայց Բ. Գրան հետ վերաբերութիւն չունին, վասն զի ներքին ու առտնին են միայն: Այնքան Վերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութիւնը անպատեհութենէ հետի է, եւ ընդդիմախօսներուն կողմէ եղած առաջարկութիւնները այնքան մերկնին յարեւմտան են

որ եթէ խնդիրը քիչ մ'ալ ձեւծուի, կամ մենք Իթիւճեան էֆէնտի պիտի յարինք, կամ նա պիտի համաձայնի մեզ:

Իսկ Մամիկոնեան էֆէնտին կըսէ թէ Քաղաքական ժողովը յամենայնի պատասխանատու է Բ. Գրան առջեւ. եւ թէեւ Իթիւճեան էֆէնտի հատուածներու բաժանման առաջարկութիւնը կ'ընդունի, սակայն ընտրութեան մասին կը բաժնուի անկէ, որով կուզէ արդի դրութիւնը պահել: Այս բաժանման խնդիրն էր որ ձեր Վերաքննիչ յանձնաժողովը նկատուութեան առաւ, եւ քննելով Սահմանադրութիւնը, տեսաւ Քաղաքական ժողովոյ վրայ երկու գլխաւոր պաշտօն, մէկը յարաբերական, զոր ինքնին կը անօրինէ, միւսը տեսչական, զոր ոչ ինքնին, այլ իրմէ ընտրեալ տեսուչ խորհրդոց գործակցութեամբը կը անօրինէ: Աւստի թողուց յարաբերական մասը Քաղաքական ժողովին, եւ տեսչական մասին՝ որ բացարձակ իրն ալ չէր, յատուկ ժողով մը սահմանեց, Քաղաքականին նման Ազգային ժողովէն ընտրեալ: Գաստիարակութեան խնդիրը հանապազօր հրապարակին վրայ կը ձեւծուի, բայց Քաղաքական ժողովին գուռը եկող բաղխող չկայ, զի խնդիրը տէր չունի. Քաղաքական ժողովն ալ ժամանակ չունի. նոյնպէս Վանօրէից բարեկարգութեան խնդիրն ալ կայ, բայց անոր վրայ ծրագիր մը չէ եկած ցարդ. վերջապէս միւս խնդիրներն տէր ունին, բայց այս հանրական խնդիրներն անտէր են, եւ Վերաքննիչ յանձնաժողովը անոնց տէրը գտնելու ջանք եւ Տեսուչ ժողովը սահմանեց:

Քօլօրեան էֆէնտին Սահմանադրութիւնը իւր ամբողջութեամբը կ'ուզէ պահպանել արտաքին նկատումներով. բայց երբ ժամանակին հոլովումն, Ազգին պիտոյքներն փոփոխութեան հարկը ծնին, Ազգին ձեռքերը կաշկանդուած են արդեօք փոփոխութիւն մտցնելու. չը կըրնար ըսել իւր Օգոստոսիառ Վեհապետին, Տէր, մեր կանոնադրին այս ինչ կամ այն ինչ կէտք փոխանակ մեր յառաջադիմութեան նպատակու, մեզ ետ կը մղէ. ուստի սա կերպ փոփոխութիւն մ'ըրինք, չնոր՝ ըրէ հաստատել զայն, կրնայ ըսել անշուշտ. եւ տարակոյս չկայ որ մեր բարեխնամ Վայօրը կընդունի այս խնդիրը: Այսու ամենայնիւ այս անգամի վերաքննութեան մէջ Յանձնաժողովս կարելի եղածին չափ զգուշութիւն բանեցուց, եւ փորձառու-

Թեան խիստ բանաւոր պահանջումները նկատողութեան առաւ եւ ժողովիս ներկայացուց, որոնցմէ մին է խորհրդոց միացումը եւ Ազգային ժողովէն ընտրութիւնը. որ թէեւ ունաց առջեւ մեծ փոփոխութիւն մը կը նկատուի, սակայն Սահմանադրութեան մէջ փոփոխութեան այնչափ մեծ տեղ չունի:

Քափամաճեան էֆէնտի գործոց գիւրութեան համար Մասնաժողով մը կ'առաջարկէ Քաղաքական ժողովէն ընտրեալ, որու պիտի աջակցի եւ խնդիրներն տնօրինէ: Հոս խնդիր մը կը ծագի թէ ո՞վ է պատասխանատուն. ըստ որում Քաղաքական ժողովն է՝ յայտնի է թէ Մասնաժողովին գործերն աչքէ պիտի անցնէ, ասով եւ յուսացուած արդիւնքը չպիտի ունենայ:

Պասմաճեան էֆէնտի Աերաքննիչ Յանձնաժողովոյ ըրածը գործոց միութիւն կանուանէ, եւ գործոց բաժանում ըլլալը չ'ընդունիր: Չեմ ուզեր զայն հերքելու համար երկարաբանութեամբ ձանձրացնել զձեզ, բաւ կը համարիմ ըսել թէ արդարեւ կան շատ մը ճիւղեր Աարչութեան մէջ ինչպէս 4 խորհուրդ, 5 հողաբարձութիւն, 2 ժողով, ինն մարմին են ընդամենը, բայց ասոնցմէ եօթը արտօնութիւն չ'ունին առանձին գործելու, եւ վերաքննիչ Յանձնաժողովը այս անդամալոյծ մարմիններու տեղ մէկ ժողով կառաջարկէ գործելու կարող ու անկախ:

Այս է ահաւասիկ մեր պատասխանը՝ չորս ընդգրկմասութիւն:

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՖ.— Գիտութեանց լըրումը, նա մանաւանդ ազդաց յառաջագիտութեան շարժառիթը օրէնքն լինելը անուրանալի ճշմարտութեանց կարգն անցած է, եւ յիւրաւի երբ օրէնք մը կը հաստատուի կամ փոփոխութեան կ'ենթարկուի, կարծէ եւ շատ իսկ կարծէ երկար եւ նուրբ քննութիւն մ'ընել. ուստի երբ Մասթէոս վարդապետ կ'ըսէ թէ խնդիրը ձեռնել պէտք է, զիս համամիտ կը գտնէ իրեն: Այն պատճառները՝ որոնց համար փոփոխութիւն կառաջարկուէր, ըսինք արդէն թէ բանաւոր եւ իրաւացի էին, եւ հիմա կառաջարկէր որ՝ Ընդհանուր ժողովը Քաղաքականէն զատ Տեսուչ ժողով մ'ալ սահմանէ, որ՝ առանց Քաղաքական ժողովոյ գիմելու իւր մէջ տնօրինէ խնդիրներն, եւ գործերն շուտով կարգադրուին վերջնան: Ամենուս ալ միա-

պէս փափաքելի է գործոց շուտափոխ լումումը, եւ անհրաժեշտ. բայց եթէ այդ վիճակին մէջ չ'են գտնուիր այսօր մեր վարչութեան գործերը, որու է յանցանքն արդեօք. եթէ թերութիւնը օրէնքին մէջն է, ես ալ կը համաձայնիմ փոփոխութիւն ընդունելու եւ փոփոխութիւնն ալ սկզբունքի մը եւ ուրիշ ազդաց օրինակին վրայ կրնայ ձեւուիլ, եւ աս մենէն ծանուցեալ սկզբունքը բաժանման դըրութիւնն է: Քաղաքական ժողով ունինք այժմ եւ Տեսուչ խորհուրդներ անոր ստորակարգեալ. եթէ ժողովոյ անդամներն թոշակաւոր լինէին բնականաբար խնդիրներն աւելի արագ լումում եւ կարգադրութիւն գտնելու վիճակն կատանային. ուստի ինչ պակասութիւն որ կայ նոյն իսկ Քաղաքական ժողովոյ բնութեան մէջ, ինչպէս կարելի է օրէնքին ընծայել. կուգայ ժամանակ որ ազգը ասոր դարմանը կը մտածէ: Մենք որ այժմ Սահմանադրութիւնը կը վերաքննենք, եթէ ժողովականաց պաշտօնին բնութեան յատուկ տարերքներու պակասութեան համար՝ օրէնքը փոփոխութեան մատնենք, ազգին համար քնաւ օգտակար գործ մը կատարած չ'եմք ըլլար. ուստի կըսեմ որ Սահմանադրութեան արդէն կատարած բաժանումը, որուն դէմ կըսեն թէ արդելք է գործոց յառաջագիտութեան, մեծ օգուտներ ունի. թէ պակասութիւնը օրինաց ոգւոյն մէջ չէ, այլ պաշտօնէից ընտրութեան, ուստի կը պնդեմ թէ ներկայ դրութիւնը՝ ինչ որ է՝ պահել, աշխատութեան բաժանման սկզբունքը աւելի ընդարձակ կերպով գործադրելու համար ճիւղեր յաւելցնել, ամենէն լաւագոյն միջոցն է մեր բաղձանացը հասնելու համար:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ.— Մինչեւ ցարդ եզած վիճաբանութեան մէջ՝ բոլոր ատենաբաններն՝ ի բաց առեալ զանոնք, որք սահմանադրական արդի դրութիւնը անփոփոխ պահել կուզեն, ինչպէս Քօլօլեան էֆէնտի եւ այլք, համամտօրէն կրնգուին թէ մեր ազգային գործերը այժմու դրութեամբ չեն կրնար արագ ու լաւ կերպով կարգադրուիլ, եւ թէ փոփոխութիւն մը անհրաժեշտ է վարչական մարմնոյն կազմակերպութեան մէջ:

Աշխատութեան բաժանումը գործոց բարւոք տնօրէնութեան անմենէն անվրէպ ու լաւագոյն միջոցն է, անփոխելի սկզբունք մ'է այս, եւ ես գլխաւորաբար այս սկզբան վրայ

յեցուցած եմ իմ առաջարկութիւնս: Սահմանադրութիւնը Տեսուչ խորհուրդներն Քաղաքական ժողովոյ հետ անձուկ յարաբերութեամբ մը կապած եւ անոնց ու Քաղաքական ժողովին միանգամայն գործելու ազատութիւնը չ'ըթայած է, եւ այս դրութեամբ երկուստեք դժուարութեան, եւ ազգային գործերն շնատուց մատնուած են:

Այս անել կացութենէն փրկելու համար Աարչութիւնը, ուրիշ լաւագոյն միջոց չկար ըստ իս, եթէ ոչ՝ Տեսուչ խորհրդոց պաշտօնն որ արդէն Քաղաքական ժողովին կը պատկանի նոյն իսկ մեր սահմանադրական արդի դրութեամբ, գլխովին յանձնել անոր, սակայն աշխատութիւնը զիւրելու համար զայն երեք կամ չորս հատուածի բաժնելու թէութեամբ: Այս եղանակը՝ ինչպէս ըսի յառաջագոյն, պիտի ապահովէ նաեւ համարատուութեան եւ պատասխանատուութեան սկզբունքը, որ գրեթէ չկայ այժմ:

Ինչո՞ւ Քաղաքական ժողովը շատ գործ չկրնար կարգադրել. - յայտնի է արդէն պատճառը. բաց ի այն դժուարութիւններէն, զորս բացատրեցինք արդէն, շարաթը միանգամ կը գումարուի, եւ ի հարկէ չկրնար շատ գործ տեսնել, մինչդեռ եթէ երեք կամ չորս ճիւղի բաժնուի, իւրաքանչիւր հատուած զատ զատ շարաթօրեայ նիստեր պիտի ունենայ, եւ Քաղաքական ժողովն այսպէս երեք կամ չորս անգամ գումարուած պիտի լինի: Յայտնի է թէ այս գումարումներն գործոց արագ տնօրէնութեանը համար որքան դիւրութիւն պիտի ընծայեն: Բայց թէ ինչպէս այս ճիւղերը յարաբերութեան պիտի մտնեն Բ. Գրան հետ, կը մնայ այս կէտն ալ լուսաբանել:

Քաղաքական ժողովը՝ հատուածներու բաժնուած, ընտրուելէ ետեւ, Բ. Գրան վաւերացման կը ներկայացուի այս ընտրութիւնը, իւրաքանչիւր հատուած իւր անդամոց անուններով ուրոյն՝ զօր օրինակ Մէճէ-է Ճէ-մա-է ու յըէ-է մահ-է-մ ըսելով նշանակուած: Եւ այսպէս ամենուն համար հաստատութեան հրամանագիր տրուելով Բ. Գրանէն, իւրաքանչիւր ճիւղ կը վաւերանայ, եւ բնապէս իւր բաժնին համար Բ. Գրան հետ յարաբերութիւն կրնայ ունենալ: Ըսուի թերեւս թէ Տէրութիւնը չընդունիր այսպիսի կարգադրութիւն մը. շատ աղէկ, այդպիսի կասկածանաց դուռ չ'ըթողե-

լու համար առաջարկութեանս մէջ սա բարեփոխութիւնը կընեմ որ ամեն հատուած Բ. Գրան հետ յարաբերութիւն չունենայ, միայն ինքնուրոյն գործէ անկախօրէն, եւ ծանր ու կարեւոր պարագայներու մէջ, յորում խնդիր մը ծագի Բ. Գրան հետ առնչութիւն ունեցող՝ հատուածներն միմեան համախորհուրդ, 15 օրն անգամ մը կամ ի պահանջել հարկին, եւ այսպէս այդ տեսակ գործերն կարգադրեն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.— Հետզհետէ բեմն ելնող ատենաբաններն սկսան արգի դրութիւնը անփոփոխ պահել առաջարկել. եւ Աերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութեան դէմ միայն Իւթիւճեան էֆէնտի եղաւ որ իւր կողմանէ նոր առաջարկութիւն մը բերաւ: Ժողովէն դուրս՝ զաղարի ժամուն՝ երեսփոխանաց ունաց հետ բանակցեցայ, եւ զիտեցի որ շատ զգուշաւոր են նոր դրութիւն մը հաստատելու համար, եւ պահպանողական միտումներ ունին: Այս, պէտք է զգոյշ լինիլ, եւ ամեն մէկ քայլափոխի՝ մանաւանդ երբ վարչական կազմակերպութեան դրութեան վրայ է փոփոխութիւնը, կանգ առնուլ եւ մտածել, ու խորհիլ հետեւանացը վրայ:

Այս պատճառաւ ես ալ որ Աերաքննիչ յանձնաժողովոյ առաջարկութեան կուսակից եմ, մանաւանդ թէ իրրեւ նախկին Քաղաքական ժողովոյ անդամներն մին փորձառութեամբ այդ վերաքննութեանը պէտքը նկատած ու առաջարկութիւնը ստորագրած եմ. ես ալ սկսաւ մտածել եւ այդ զգուշաւորութեան հարկին տակ ուզեցի հնար մը գտնել. որ ոչ վարչական արգի դրութիւնը բոլորովին փոխէ, եւ ոչ ալ մեր ներքին գործերն իրենց արգի դրութեան մէջ պահէ: Այս մտածմանց մէջ յանկարծ միջոց մը միտքս եկաւ, որն որ թէեւ տակաւին լաւ չկրցի հետազօտել, ըստ որում ժամանակ ալ չեղաւ, բայց կ'ուզեմ զայն այժմ երեսփոխան տեսարց ուշադրութեանը ներկայացնել, ատենախօսական ժամուս, որպէս զի գէթ մինչեւ յաջորդ նիստ ասոր վրայ ալ խորհրդածելու ժամանակ ունենանք:

Արդ՝ մեզ զբաղեցնող խնդիրներէն մէկն է, երեք խորհրդոց եւ մէկ հոգաբարձութեան միացումը: Կարծեմ թէ արգի դրութիւնը պահել ուղղոյնբէն շատերն իսկ այս միացման հարկաւորութիւնը կը տեսնեն, ոչ թէ ուսումնական, տնտեսական, վանական եւ կատկային

առանձնաշնորհեալ իրաւունքներն ի մի ձու-
լելով, այլ անոնց իւրաքանչիւրին արդէն սահ-
մանադրեալ պաշտօններուն ու պարտա-
ւորութեանց տէր միացեալ խորհուրդ մը
կազմելով: Այս միացութիւնը կուտակումն ալ չէ,
ինչպէս որ արդէն շատ լաւ բացատրած է Տ.
Մատթէոս վարդապետ. կտակաց մասը սոսկ
տնտեսական է, վանականը՝ մասամբ տնտե-
սական եւ մասամբ մ'ալ ուսումնական. կը
մնան միայն ուսումնական եւ տնտեսական
պաշտօնները որք միացած են. այս միացութիւնը
հարկաւոր է մանաւանդ անոր համար որ ու-
սումնականն տնտեսականի գործակցութեան
շատ պէտք ունի. եւ այն մարմինը որ ազգա-
յին ուսումնական յառաջադիմութեանը պիտի
հսկէ, պէտք է որ հսկէ նաեւ տնտեսական յա-
ռաջադիմութեան մասին, զի առանց դրամի
չկայ ուսումնական յառաջադիմութիւն:

Մեզ զբաղեցնող խնդիրներէն երկրորդն է
այս միացեալ խորհուրդը որուն Տեսուչ անու-
նը կը տրուի, Քաղաքական ժողովէն պէտք է
ընտրուի թէ Ազգային ժողովէն. եւ այս է
ամենուս ուշադրութիւնը գրաւող խնդիրը:
Պէտք է գիտնալ թէ վերաքննիչ Յանձնաժո-
ղովոյ առաջարկութեան ինչպէս նաեւ զայն
պաշտպանելու նկրտող երեսփոխանաց համար
բուն խնդիրը ընտրութեանց մասը չէ, որչափ
որ է Տեսուչ խորհուրդին անկախ եւ ազատ
գործելը: Սահմանադրութիւնը կը տրամադրէ
որ Տեսուչ խորհուրդն առանց Քաղաքական
ժողովոյ գիտութեան որեւէ տնօրէնութիւն մը
չընէ. ահա այս վիճակիս դարմանն է որ կը
գնեստուի, եւ զայն գտնել կը մտածուի՝ Տե-
սուչ խորհուրդին ալ Ազգային ժողովէն ուղղակի
ընտրուելուն եւ անոր համարատու ըլլալուն
մէջ, որով սա ալ Քաղաքական ժողովոյ նման
եւ համազօր մարմին մը կ'ըլլայ: Այս կէտն է
որ զոմանս կը խրտեցնէ՝ Բ. Դրան վաւերացումը
կրող ժողովի մը իշխանութեանէն անկախ ըլ-
լալէն աղէկ հետեւանքներ չգուշակելով. եւ
զոմանս ալ իրարու նման եւ համազօր մար-
միններ մէկ անունի տակ ժողովելու եւ ամե-
նը մէկէն Բ. Դրան վաւերացմանը ենթարկելու
կը մղէ. սա ալ զիս եւ ինծի հետ զուրիշները
կը խրտեցնէ: Ասոնց երկուքն ալ մէյմէկ ծայ-
րեր են, չկրնար ըլլալ որ սոսոնց միջին եղա-
նակ մը գտնուի, եւ երկու կողմն ալ կարելի
եղածին չափ հաշտեցնէ, Ահա այս եղանակն է

որ ես այժմ իմ խորհրդածութեանս առարկայ
ըրած եմ, եւ զայն կը ներկայացնեմ Ձեզ:
«Տեսուչ խորհուրդը ընտրուի Քաղաքական
& ժողովէն, եւ իր պաշտօնն ու պարտաւորու-
թիւնը կատարէ անկախաբար, այսինքն
& ոչ թէ միշտ հարցնելով եւ Քաղաքական ժո-
ղովոյ որոշումն առնելով, այլ իր պատաս-
խանատուութեանը տակ գործէ եւ որոշեալ
& ժամանակին համար տայ Քաղաքական ժողո-
ւովին, որ զայն տանի Ազգային ժողովին»:

Ես ալ տակաւին պիտի խորհրդածեմ այս
եղանակին վրայ, եւ թերեւս գալ անդամ ա-
ւելի աղէկ բացատրեմ զայն. կամ աւելի յար-
մարը գտնեմ ու ներկայացնեմ ձեզ: Բայց այժ-
մէն սաչափը կ'ըսեմ այս եղանակը պարզելու
համար թէ, ինչպէս որ Ազգային ժողով կ'ընտ-
րէ Քաղաքական ժողովը, եւ անոր վրայ վըս-
տահ ըլլալով, կը յանձնէ ազգային գործոց տը-
նօրէնութիւնը, ու որոշեալ ժամանակին հա-
մարը կ'առնու, եւ որոշեալ ժամանակէն ա-
ռաջ հարցում միայն կ'ուղղէ, եւ առած բա-
ցատրութիւնը գոհացուցիչ չըլլայ նէ, անվըս-
տանութեան քուէ տալով կը ձգէ զայն պաշ-
տօնէ. այսպէս վարուի Քաղաքական ժողովն
ալ Տեսուչ խորհուրդին հետ, որով Քաղաքա-
կան ժողովն միայն ընտրութեան եւ հսկողու-
թեան մասին պատասխանատուութիւն կ'ու-
նենայ Տեսուչ խորհուրդին համար, եւ ոչ անոր
գործոց մասին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ խորհուրդը ե-
թէ իբրեւ Նախաձեռնութեան գիւտնի անդամ
կը ներկայացունէք մեզ, զուք արդէն ձեր տե-
ղեկարերն ունիք. իսկ եթէ ձեր անձնական
կարծիքն է միայն, բացայայտ կերպով ըսէք
մեզ զայդ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Այո, իմ անձնական
կարծիքս է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ, ուրեմն
տէր եղիք ձեր առաջարկութեան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ըսի իսկզբան, նո-
րէն կրկնել հարկ չէ. երեսփոխան տեսրց ու-
շադրութեանը եւ խորհրդածութեանը առար-
կայ ընելու համար այս նոր եղանակը ներկա-
յացուցի. գալ նիստին կը պահեմ թէ զայն ինչ-
պէս պիտի ներկայացնեմ եւ ինչպէս պիտի
պաշտպանեմ:

ՁԱՅՆԻՐ. — Շատ աղէկ, շատ աղէկ:
ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — (Շարունակելով) Կ'եզ-

րակացնեմ խօսքս, երեսփոխան էֆէնտիներ,
իմ մասնաւոր կարծիքս է որ Տեսուչ խորհուրդ-
ները միանան եւ Ազգային ժողովէն ընտրուին.
եւ եթէ Քաղաքական ժողովէն ալ ընտրուին,
որոշեալ ժամանակ համարատու ըլլան անոր,
այնպէս որ չհարցնեն Քաղաքական ժողովին
թէ այս ինչ գործը ինչպէս տնօրինեմ, թէ՛
հաց ուտեմ, կամ ջուր խմեմ:

Արդի կացութեան մէջ Տեսուչ խորհուրդ-
ներն ինչպէս կ'ըսեն ռամկօրէն, Գրեմ-
մս կարդապէս, եւ ոչ այլ ինչ, Այս կաշ-
կանդուած վիճակէն ազատել պէտք է զանոնք:
Եթէ ժողովը չ'ուղէ նոր բան մ'ընել, եւ ա-
ռանձին Տեսուչ ժողով կամ խորհուրդ մը կարգել
Քաղաքականէն անկախ, այն ատեն այս պարզ
միջոցը եթէ ընդունի աղէկ կ'ընէ, Թող Քա-
ղաքական ժողովէն ընտրուի Տեսուչ խորհուր-
դը, բայց ոչ թէ այժմու դրութեան մէջ,
Քաղաքական ժողովն զնա գործէ, պէտք է ըսէ
անոր, եւ Պատրիարքը անոր որոշմանց գրեթե
ստորագրէ, եւ գործադրել տայ, եւ տարե-
գըլին Քաղաքական ժողովն հաշիւ ուղէ ան-
կէ: Եթէ Քաղաքական ժողովն ժամանակէն
առաջ իմանայ որ անպատեհութեան մէջ ին-
կած է Տեսուչ խորհուրդը, հարցում կուղղէ, եւ
ի հարկին մինչեւ իսկ լուծէ, բայց պատճառը
Ազգային ժողովին յայտնէ անմիջապէս, Անոնց
համար՝ որք արդի դրութիւնը պահել կուզեն,
իբրեւ բարեփոխութիւն մ'առաջարկեցի այս
կէտը, որ դարձեալ միեւնոյն նպատակին կը
տանի զմեզ, այն է Քաղաքական ժողովն ու
Տեսուչ խորհուրդն անգործութեան դատա-
պարտութենէն կ'ազատէ, կապերը կը խզէ,
եւ գործերու արագ ընթացք մը կ'ուտայ: Իսկ
Տեսուչ խորհուրդն Բ. Դրնէն վաւերանալը
բոլորովին աւելորդ է:

ՄԱՄԻԿՈՆՅԵԱՆ Մ. ԷՑ. — Ինձ այնպէս կը
թուի թէ ֆախստեան էֆէնտի իւր նոր առա-
ջարկութեամբը՝ նախորդ առաջարկութիւնը
չբարեփոխեց, այլ անոր սկզբունքը ինչ որ էր,
նոյնը անփոփոխ պահեց հաստատեց պարագա-
ներու փոփոխութեամբ եւ եթէ: Ըսաւ նախ՝
թէ Տեսուչ ժողովն ընտրուի Ազգային ժողո-
ւիէն եւ ինքնուրոյն գործէ. հոս մեր առջեւ
այն մեծ խնդիրը կ'ենէր թէ՛ ինչպէս Քաղա-
քական ժողովն անոր գործոց պատասխանա-
տուութիւնը պիտի ստանձնէ. հիմայ թէեւ

Տեսուչ խորհրդոյ ընտրութիւնը Քաղաքական
ժողովին կ'ընծայէ, բայց դարձեալ քանի որ
ազատութիւն կուտայ անոր ինքնուրոյն գոր-
ծելու, եւ միայն որոշեալ ժամանակի մէջ Քա-
ղաքական ժողովին համար տալու պարտաւոր
կ'ընէ, ճիշդ միեւնոյն բանն ըրած կը լինի:
պատասխանատուութեան մասը բարեփոխու-
թիւն մը չստանար, եւ Քաղաքական ժողովն
դարձեալ պատասխանատու կը մնայ անոնց
գործոց համար: Տէրութեան առջեւ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — (Ընդհնդեւ) Այս
քանի անգամ է որ պատասխանատուութիւն կը
յեղյեղէք, եւ կը մոռնաք որ Քաղաքական ժո-
ղովն պատասխանատու է Ազգային ժողովին
եւ իր համարատուութիւնն անոր կ'ներկայացէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պարտաւոր եմ իբր
Ատենապետ ժողովին այս պատասխանատուու-
թեան կէտը պարզել, եւ շփոթութեան տեղի
չթողուլ: Մեր Ազգը Քաղաքական ժողով մ'ունի
ազգային բոլոր ոչ-կրօնական գործոց տնօրէնու-
թեան համար Ազգային ժողովէն ընտրեալ, որու
պատասխանատու է. բայց միանգամայն պա-
տասխանատու է նաեւ Բ. Դրան, յորմէ կ'ըն-
դունի իւր պաշտօնին հաստատութեան հրօ-
վարտակը: Հետեւապէս ենթադրել թէ Քաղա-
քական ժողովը Ազգային ժողովին է միայն
պատասխանատու, ներելի չէ, եւ իմ պարտքս է
այս տեսակ ենթադրութեանց դէմ բողոքել,
եւ միանգամ ընդ միշտ այս կէտը պարզել:

ՄԱՄԻԿՈՆՅԵԱՆ Մ. ԷՑ. — (Շարունակելով)
Ուստի Քաղաքական ժողովն չկրնար Տեսուչ
խորհուրդին ըսել, գործէ ինչ որ կուզես, հա-
մար տուր միայն տարեգըլին եւ ես պատաս-
խանատու եմ քեզի համար:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — (Ընդհնդեւ) Բայց
Ազգին ներքին գործերն ինչ են որ Տէրութեան
հետ վերաբերութիւն ունենան եւ Քաղաքա-
կան ժողովոյ վրայ պատասխանատուութիւն
ենթադրեն. պէտք է որ այս մասը բացատ-
րուի:

(Աւարտութեամբ)
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ժողովին մէջ ընդ-
միջումներն ՚իւականն պարտքն է ընել. եւ ե-
թէ դուք այդ կերպով վարուիք, չե՛ք կրնար
խնդրոյն մէջէն ելնել. եթէ ատենաբանը չեզի
խնդրէն, այն ատեն ՚իւականը ի խնդիր կրնայ
հրաւիրել զինքը:
ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ուրեմն այդ պա-

տասխանատուութեան խնդրոյն համար մասնաւոր խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը Վարչութեան կազմակերպութեան վրայ է, եւ դուք երկու անգամ խօսեցաք արդէն . ուրիշ մասնաւոր խնդիր չունինք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ուրեմն ատենաբանը ետ թող առնէ իւր խօսքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ այս Գիււանէն կը յայտարարեմ վերօտին թէ Ազգային Վարչութեան ժողովները Ազգին եւ Տէրութեան միանգամայն պատասխանատու են վարչական ընդհանուր գործոց համար . ինչպէս որ Սահմանադրութիւնն ալ կը տրամադրէ : Խնդրեմ, մի ընդմիջէք՝ որ ատենաբանը խօսի, եթէ ոչ ի կարգ պիտի ստիպուիմ հրաւիրել :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նոյն իսկ Սահմանադրութեան համաձայն, բացատրութեան կարօտ է այդ ալ, որ ուղիղ հասկցուի :

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Խօսից լեւել) Հետեւաբար կը պնդեմ թէ Տեսուչ խորհուրդին կարող չենք անկախութիւն տալ, եւ ըսել որ գործէ ազատօրէն ու տարիէ մը համար տուր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրը կը տարածամի եւ նիստը վերջացնելէ առաջ՝ արժան է որ ներկայեմ ժողովին այս աւուր վիճաբանութեան հակիրճ մէկ բովանդակութիւնը եւ խնդրոյն ցանուցիր ճիւղերն ամփոփեմ :

Ինչպէս կը յիշէք, մեր առաջին գործն էր Վարչութեան մարմնոյն փոփոխութեան եզրուակը մտածել . եւ առաջին հայեցումով տեսանք թէ խնդիրն բազմազան ճիւղեր ունէր իւր մէջ, միանգամայն յորձորման, պաշտօնի տեսչութեան, եւ ուրիշ երկրորդական պարագայից վերաբերեալ փոփոխութիւններ : Հետեւապէս վիճաբանութիւնը ճշտագեղութեամբ մեկուսի գրինք երկրորդական պարագաները, եւ ամենէն կարեւոր կէտը ձեռք առինք, որ է մտածել թէ ինչ կերպով պէտք է վարչական մարմինը կազմել :

Սահմանադրութեան այն մասերը, այն տրամադրութիւններն՝ որոնք վարչական կազմակերպութեան կը պատկանին, մեզմէ շատերն իրենց անձնական փորձերով, շատերն ուսումնասիրելով սովորած են արդէն, գիտեն ընդհանրապէս թէ Պատրիարք եւ Քաղաքական ժո-

ղով Ազգին հետ ինչ, եւ տէրութեան հետ ինչ յարաբերութեանց մէջ կը գտնուին, ինչ իրաւասութիւններ, ինչ պաշտօններ ունին . եւ այս ամենը անշուշտ չկայ հարկ խնդրոյ ներքեւ երթարկելու :

Մեր ընելիքն է միայն տեսնել թէ ինչ փոփոխութիւն հարկ է մտցունել վարչական մարմնոց կազմակերպութեան մէջ, որպէս զի դիւրաւ ընտրուի եւ դիւրութեամբ գործ տեսնէ : Ասոր համար մեր առջեւ ունինք տեղեկագիր մը, որ ծրագրի մը վրայ հիմնեալ է . երկուքն ալ փոփոխութիւն կ'առաջարկեն մեզ, եւ ընդհանուր ժողովն ընդ երկար վիճաբանելէ ետեւ անոնց որոշոյն ու սկզբանց վրայ՝ իւր քուէով ինքն ալ հաստատած է փոփոխութեան հարկը : Ինչ առանցքի վրայ ուրեմն պէտք է հաստատել վարչական մեքենան, որ շարժի ու մղու՛մ տայ մեր վարչական գործոց ընթացքին . եւ ինչ կը մտածեն արդեօք այս մասին մեր ատենաբան էֆէնտիները :

Կարծիք մը կայ՝ որ կուզէ հին դրութիւնը պահպանել, եւ հերիք կը համարի միայն հարկադրել Վարչութիւնը իւր ամեն ճիւղերով որ գործեն : Եւ սակայն այս կարծիքը՝ որ Քօլօլեան էֆէնտիինն էր, օտար է մեր նպատակէն, վասն զի ժողովն հին դրութեան վրայ սեւեռիլ մնալ պատշաճ չը դատեց, եւ արդէն որոշած է իր քուէով փոփոխութեան հարկը : Այս կարծիքին կը յաջորդէ Քափամաճեան էֆէնտիի մէկ առաջարկութիւնը, որ նոյնպէս հին դրութեան կը յարի, սա տարբերութեամբ միայն որ Քաղաքական ժողովին եւ Տեսուչ խորհրդոց մէջ տեղ տեսակ մը միջնորդութեան պաշտօն կատարելու համար մասնախումբ մը սահմանուի, որպէս զի Քաղաքական ժողովն խորհրդոց յարաբերութեան տաղտուկէն ազատելով, իր մասնաւոր պաշտօնը կատարելու նուրիշ բոլոր ժամանակը . — Այս առաջարկեալ միջնորդ յանձնախումբի պաշտօնը ճշտեալ չէ, բայց ինչ որ է, վարչական ժողովներն ու խորհուրդները դարձեալ նոյն վիճակի մէջ կը մնան, որով այս առաջարկութիւնն ալ Քօլօլեան էֆէնտիի առաջարկութենէն մեծ տարբերութիւն մը չունի, եւ էապէս նոյնն է գրեթէ :

Ասկէ ետքը կուգայ Մամիկոնեան էֆէնտիի առաջարկութիւնը որ բացարձակապէս անկախ տեսուչ ժողովի մը հաստատութեան

դէմ է, այլ սակայն կընդունի որ տեսուչ խորհուրդներն միանան, բայց այս միացեալ խորհրդոյ ընտրութիւնը, յարաբերութիւնը Քաղաքական ժողովին հետ, իրաւասութեան սահմանը, իր կապերուն օղակները մնան այնպէս ինչպէս են հիմա տեսուչ խորհրդոց առանձինն Քաղաքական ժողովին հետ : Այս առաջարկութեան Փափաղեան էֆէնտիին իւր վերջին ատենաբանութեան մէջ եկաւ յարեցաւ, միայն թէ միացեալ Տեսուչ խորհրդոց գործելու ազատութիւնը՝ որու ջատագով է ինք, չ'զոհեց, եւ ուզեց դնել զնա այն դիրքին մէջ, ուր Քաղաքական ժողովն կը գտնուի հիմա Ազգային ժողովին նկատմամբ, այսինքն գործելու ազատ Տեսուչ խորհուրդ մը, որոշեալ պայմանաժամի մէջ համարատու՝ Քաղաքական ժողովին : Յետոյ կուգայ Պասմաճեան էֆէնտի որ գործոց ու աշխատութեան բաժանման սկզբունքը կը հռչակէ ու կը պաշտպանէ, եւ գործքերու թուով ու չափով ժողովներ կուզէ, ամենն ալ իրենց բաժնին պատասխանատու, բայց թիւ չ'որոշէր, գործադրութեան պարագաները չ'ճշդէր, եւ ի վերջէ կուգայ Քօլօլեան էֆէնտիի առաջարկութեան կը յարի, եւ կընդունի որ հին դրութիւնը պահպանուի անվթար : Կը մնայ զուտ Իւթիւճեան էֆէնտիի առաջարկութիւնը, որ տեսակ մը բարեփոխութիւն է վերաքննիչ Յանձնաժողովոյ առաջարկութեանը, Վերաքննիչ Յանձնաժողովը ինչ կ'առաջարկէ եւ Իւթիւճեան էֆէնտի ինչ կը բարեփոխէ . — Յանձնաժողովը՝ Քաղաքական ժողովը ծանրաբեռնեալ, Տեսուչ խորհուրդներն սահմանափակ եւ կաշկանդուած կը գտնէ, եւ կանջատէ յարաբերութեան գործերը Տեսուչութեան գործերէն առաջինը Քաղաքական ժողովին կը թողու, եւ երկրորդին համար ուրոյն ու անկախ Տեսուչ ժողով մը կ'առաջարկէ՝ ընդհանուր ժողովէն ընտրելի եւ առ այն համարատու : Եւ այս առաջարկութիւնն է որ Իւթիւճեան էֆէնտի բարեփոխել կը փութայ եւ կ'առաջարկէ, Քաղաքական ժողովը՝ Տեսուչ խորհուրդներու սեպհական գործոց բնութեան համեմատ, քանի մը հատուածի բաժնել, այնպէս որ իւրաքանչիւր հատուած՝ գործեն իրենց ճիւղին մէջ անկախ եւ ինքնուրոյն, եւ ի հարկին երբ հանրական կարեւորութիւն ունեցող խնդիր մ'ունենան

քննելու՝ գումարուին համախումբ եւ որոշումնին տան միասին : Արժան է հոս յիշել, թէ վերաքննիչ Յանձնաժողովը Տեսուչ ժողովէն ի բաց թողեր է երեք մարմին, մէկ խորհուրդ դատաստանական եւ երկու հոգաբարձութիւն՝ Հիւանդանոցի եւ Ելեւմտից . եւ յայտնի չէ ցոյց տուեր թէ ասոնք անկախ պիտի գործեն, թէ՛ ոչ : Այս պարագան սքօղեցաւ վիճաբանոյն երու խաղարկու աչքերէն, եւ Յանձնաժողովոյ Տեղեկագրերն սոյն բացառիկ երրորդութիւնը անտես թողուց եւ լոյս չ'տուաւ ժողովին :

Կը տեսնէք որ Վերաքննիչ յանձնախումբի առաջարկութեան առջին՝ միայն Իւթիւճեան էֆէնտիի առաջարկութիւնը կայ հակակշիռ : Իւթիւճեան էֆէնտի կուզէ սահմանել որ մեր ազգային վարչական գործերէն անոնք որ կը բժնական ժողովոյ իրաւասութեանն են դուրս կը մնան, մէկ բառով, մեր բոլոր ոչ-կրօնական գործերը զոր տէրութիւնը ճշտեմէ կը յորձորէ, ինչպէս Ս. Պատրիարքը յիշեցուց, Քաղաքական ժողովի մէջ տնօրինուին, փոխանակ մասնաւոր խորհուրդներու եւ հոգաբարձութիւններու մէջ զիւանական պտոյտ ընելու . եւ Քաղաքական ժողովն ասոնց բազմազան տեսակին համեմատ մէկ քանի հատուածի բաժնուի, որոց իւրաքանչիւրն ինքնուրոյն գործէ եւ պատասխանատու մնայ իր մասին : Իսկ խորհուրդներն ու հոգաբարձութիւններն ջնջուին, վերնան, եթէ ոչ՝ բոլորովին, գէթ իրր պաշտօնական մասունք վարչական մարմնոց :

Այս է Իւթիւճեան էֆէնտիի առաջարկութիւնը, որու մէջ ստուգիւ պարզութիւն կայ : Արդ՝ խնդիրն այն կէտին հասած է որ մէկ ձեռքերնիս Վերաքննիչ յանձնաժողովոյ, եւ միւսին մէջ Իւթիւճեան էֆէնտիի առաջարկութիւններն կան . միւս առաջարկեալ փոփոխութիւնները մէկ մէկ բարեփոխութիւն են սոյն երկու գլխաւոր առաջարկութեանց : Կը հարցունեմ ժողովին, միթէ խնդիրն վճռելու աստիճանը հասած կը կարծէ զինքը :

ՁԱՅՆԵՐ. — Ո՛չ, ո՛չ, ո՛չ :
ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ աղէկ, նիստ մ'ալ ուրեմն կը նուիրենք :
ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պատրաստ եմ յառաջիկայ նիստին գրաւոր ներկայացունել իմ առաջարկութիւնս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ նոյնը պիտի խնդրէի ձեզնէ, եւ այն ատեն գրաւոր ունեւնալով մեր ձեռքը նոյն առաջարկութիւնը, կըրնանք բոլոր պարագաներով միւսներուն հետ հակակշռել, եւ կատարեալ համոզում մը ունենալ: Եթէ երբորդ առաջարկութիւն մ'ալ ստանանք մինչեւ այն ատեն, զայն ալ ուշադրութեան կ'առնունք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Եւ արդէն անկէ զատ ուրիշ առաջարկութիւններ ալ կան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Վերջապէս յաջորդ նիստին կը շարունակենք վիճաբանութիւնը, եւ կը յուսամ որ խնդրոյն գոհացուցիչ լուծումը կստանանք. հետեւապէս մեր Օրակարգը կը մնայ միեւնոյնը:

Ժողովը թէեւ այս միջոցին օրէնսդրական ծանրակշիռ խնդրով մը կ'զբաղի, եւ այս մեծ փառք է իրեն, սակայն պէտք չէ նաեւ մեր սահմանադրական պարտաւորութիւններն ի

մոռացօնս թողուլ: Սահմանադրական նոր տարւոյ առթիւ մեր առաջին գործն է՝ Վարչութեան համարատուութիւնն ստանալ, եւ ելուամտից հաշուէկշիռը քննել. ուստի կը խընդրեմք Ազգային վարչութենէն որ փութացնէ զայն. կը խնդրեմ, նաեւ Նախաքննիչ դիւաններէն որ հաճին Ազգային ժողովէն իրենց յըշեալ խնդիրներն շուտափոյթ վերադարձնել մեզ:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — (Առեւ-դուր Բազմութեան Ժողովը) Մտերս կներկայանայ Քաղաքական ժողովոյ համարատուութիւնը:

Ատեանը՝ ժամը 10 ին գոցուեցաւ:

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Հ. Ս. ԱՂԱՅԱՅԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐԹՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Արքեպիսկ	Նար-պէյ	ԱՅՆԱԳՆՏ
2. Տ. Ներսէս	Վ.	Աւլանեան	ԱՅՆԱԳՊԸ
3. Տ. Ամբրոսիոս	»	Իսկէնտէրեան	
4. Տ. Գէորգ	»	Գերձակեան	
5. Տ. Զաքարիա	Մ	Զիւմրիւթեան	
6. Տ. Խորէն	»	Կիւրոյեան	
7. Տ. Կարապետ	»	Սերոբեան	
8. Տ. Յովնաննէս	»	Փափաղեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	»	Արամեան	
11. Տ. Գրիգոր	»	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	»	Խասգիւղի	
13. Տ. Սուքիաս	»	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդաննէս	»	Միջագիւղի	

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մաքսուտեան	պէյ	ԱՅՆԱԳՆՏ
2. Միքայէլ	Մամիկոնեան	էֆէնտի	ԱՅՆԱԳՊԸ
3. Արրահամ	Հարենց	»	
4. Ասափա	Իկիտպաչեան	»	
5. Խաչիկ	Ալեանաքեան	»	
6. Կարապետ	Փափաղեան	»	
7. Մկրտիչ	Էսաեան	»	
8. Յակոբ	Կոստանդ	»	
9. Յարութիւն	Գափամաճեան	»	
10. Սարգիս	Արրահամեան	»	
11. Սարգիս	Արապեան	»	
12. Սիմոն	Միքայէլեան	»	
13. Սիմոն	Նորատունկեան	»	
14. Ստեփան	Խնդիրեան	»	

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԵ՛ԴՐՈՆԱԿԱՆ ԵՆՏՐԱԿՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԿՈՒՑ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը հախուշի ի Դիւանաւանի Պատրիարքարանի, և Ղարաբիոյ Ս.
Լուսաւորի: Եկեղեցւոյ թանկութիւնը և Հայ գրախմբաւանց քով: